

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزیک

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԹ. ՏԱՐԻ, 2010, ԹԻԻ 11 (341) - VOL. XXIX № 11 - السنة التاسعة والعشرون - العدد الحادي عشر



ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՔԸ




ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՔԸ (Կարդալ էջ 2)



# ԹԻԼԻՆ ՆԻԼԹ ԵՐՂ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 سارزليک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Պատմություն	10
■ Պատգամ	15
■ Մեր տեսակցությունները	16
■ Յուշեր	18
■ Մասնաձիւղէ Մասնաձիւղ	28



## ԲԱԺԻՆՆԵՐ

■ Ազգային Հոգեր	3
■ Ճանչնանք	21
■ Միջազգային	24
■ Սարգական Գիտություն	26
■ Անդրադարձ	28
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40

Սարգական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻԹ. ՏԱՐԻ, 2011, ԹԻ 11 (341)  
 ԽՄԲԱԳԻՐ  
 Վիգեն Աւագեան  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ  
 Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Աբօ Մոսիկեան  
 Գօգօ Սկրտիչեան  
 Վահան Համամճեան  
 Տիրան Հահինեան  
 Սալբի ճէճեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Ներսէս Արք. Բախտիկեան\*,  
 Բաֆֆի Սիւլահեան, Յարութ  
 Շէրնէգեան, Գ. Թորոյեան, Կարպիս  
 Գոյումճեան, Շաղիկ Գէորգեան  
 եւ շրջաններու թղթակիցներ:  
 Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն

**Yconcept**  
 INTERNATIONAL  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրճ Համուտ, Գինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ  
 Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ձըղումճ է 35000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



# ԵՆԻՔ ԿՐԻՍԻՍ ԿԵՆՏՐՈՆ

## ՏԱՅԱԴԱՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԸ

**Խ**առն ամուսնություններու նուիրուած գիտաժողովի մը կ'անդրադառնայ «Մարզիկ»-ի այս թիւին առաջնորդող նիւթը, ուր ներկայացուած թիւերը անպայման հարցում մը կ'արթնցնեն իւրաքանչիւր հայու մտքին մէջ, թէ ո՞ր կ'ուղղուինք այս ընթացքով, Սփիւռք թէ Հայաստան:

Սովորական մարդու մը կողմէ սովորական ամպիոնէ մը արտասանուած թիւեր չեն անոնք: Սփիւռքի նախարար Յրանոյշ Յակոբեանն է, որ պետական գիտաժողովի մը ընթացքին ահազանգ կը հնչեցնէ, թէ խառն ամուսնություններու համեմատութիւնը այսօր Սփիւռքի կարգ մը գաղութներուն մէջ հասած է 60 եւ մինչեւ 80 առ հարիւրի: Վտանգը հասած է նաեւ Հայաստանի դռները, ուր 10 տարուան ընթացքին՝ 2000-2009, խառն ամուսնություններու թիւը աւելցած է 263 առ հարիւրով, տարեկան 473 ամուսնութենէ բարձրանալով 1244 ամուսնութեան:

Կար ժամանակ, երբ հայ ընտանիքը կը ներկայացնէր ընկերային-հասարակական անփոխարինելի արժէք: Նահապետական հայ ընտանիքներու մէջ կը կազմուէին ու կը պահպանուէին ազգային արժանութիւններն ու սովորութիւնները, լեզուն, կրօնքն ու մշակոյթը: Ընտանեկան յարկի տակ կը կատարուէր մատղաշ սերունդի կրթութիւնն ու դաստիարակութիւնը: Ընտանիքը մեծ դեր ունէր անձի մը ազգային ինքնութեան կերտման մէջ: Կարճ ընտանիքը կը հանդիսանար հայ ընկերութեան կազմակերպման ամէնէն կայուն եւ ամուր բջիջը:

Այսօր, ո՞ր ենք մենք այս բոլորէն, երբ հայ երիտասարդութեան 60-80 տոկոսը կ'ամուսնանայ օտարներու հետ: Ազգային ոգիով ու կազմով ընտանիքները կը նուազին օրէ օր: Մտահոգութիւնը ամէնուր է, նաեւ՝ Հայաստանի մէջ, ուր անկախութեան հովերը իրենց հետ բերած են խառնաշփոթ պայման-

ներ եւ սանձարձակ ազատամտութեան տրամադրութիւններ, որոնք երբեմն յանգած են ազատութեան հասկացողութեան սխալ ընկալման եւ ազգային արժէքներու խեղաթիւրման:

Խառն ամուսնություններէ խուսափումը ինքնանպատակ չէ, ան հայապահպանութեան հիմքն է: Խառն ամուսնություններէ ծնած երեխաները շատ յաճախ իրենց մտածելակերպով աշխարհաքաղաքացիներ են, որոնց կապը ազգին հետ եթէ բոլորովին բացակայ չէ, ապա՝ շատ տկար է:

«Ճակատագրական են խառնազգի ամուսնությունները թոյլ ու փոքր ազգերու համար,- պիտի ըսէր Լեւոն Շանթ-, խառնազգի ընտանիքը Բաբելոն մըն է, ուր մարդիկ կը խօսին տարբեր լեզուներով: Ինչքան ալ երկու կողմէն իրարու դէմ գան սիրով, մեղմութեամբ, լայն մտածումով եւ փոխադարձ զիջումներով, երբեք չեն կրնար լեցնել այն վիհը, որ կայ տարբեր հոգեբանություններու, տարբեր պատմական դիրքի ու ձգտումներու եւ տարբեր քաղաքակրթական ժառանգություններու միջեւ»:

Ճիշդ է, ամուսնութիւնը անհատական որոշումի հարց է եւ ազգ մը գործ չունի ընտանիքի մը նմջասենեակէն ներս, բայց եւ այնպէս, խառն ամուսնութիւն մը ազգին հարցն է ու ցա՛ւը միաժամանակ: Ազգը հաւաքական ջանքերով կըրնայ դանդաղեցնել խառն ամուսնություններու համեմատութիւնը, եթէ դիմէ այնպիսի նախաձեռնություններու եւ ծրագիրներու, որոնք երիտասարդութեան առջեւ կը բանան հարազատ արմատներու վերադարձի ճամբան:

Ի վերջոյ, ազգերու զօրութիւնը ընտանիքներու մէջ է: Զօրաւոր է այն ազգը, որ ունի զօրաւոր ընտանիքներ: Կ'արժէ լրջօրէն խորհրդածել այս մասին եւ ճշդել մեր այսօրուան ընելիքը, իբրեւ միութիւն, եկեղեցի, հասարակական կազմակերպութիւններ եւ պետութիւն:

Վա՛ղը կրնայ ուշ ըլլալ:

# ԱՅՍՕՐՈՒՄՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ ԽԱՌՆ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ, ՄՇԱԿՈՅԹԻ, ԱՒԱՆԴՈՅԹՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԱՐԺԷՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է



Օրէ օր մտահոգիչ համեմատութիւններու կը հասնի խառն ամուսնութիւններու երեւոյթը, որուն դէմ համազգային քայլեր առնելու կոչ կ'ուղղէ Սփիւռքի նախարար Յրանոյշ Յակոբեան, այս նիւթին շուրջ կազմակերպուած գիտաժողովի մը ընթացքին:

Յրանոյշ Յակոբեանի կոչը չի կրնար անարձագանգ մնալ, որովհետեւ սփիւռքեան այլ կազմակերպութիւններու եւ կառոյցներու նման, Հ.Ս.Ը.Մ. եւս անմիջական պարտաւորութիւնը կը զգայ «ազգային ինքնութեան որակների պահպանման նպատակով մշակելու եւ իրականացնելու անհրաժեշտ

ծրագրեր խառն ամուսնական ընտանիքներում»: Աշխատանք մը, որուն՝ ի շարս այլոց, երեք տարիէ լծուած է միութեան ռազմավարական ծրագրաւորումի յանձնախումբը, իր վերջնական պատկերացումները Հ.Ս.Ը.Մ.ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր ժողովին ներկայացնելու հեռանկարով:

Արդ, ստորեւ տրուած խօսքը Յրանոյշ Յակոբեանի բացման ելոյթն է «Հայ ինքնութեան որակների պահպանումը խառն ամուսնութիւններում» նիւթով գիտաժողովին, որ տեղի ունեցած է 25-26 Ապրիլ 2010ին, Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ: Գիտաժողովին բոլոր նիւթերը ամփոփուած են յատուկ հրատարակութեան մը մէջ, որմէ «Մարզիկ» վերջերս ստացաւ օրինակ մը:

Տեղի հասկնալի պատճառներով խօսքը կը ներկայացուի խմբագրական կարգ մը պատշաճեցումներով:

**Մ**ենք ապրում ենք բոլորովին նոր դարաշրջանում, բարձր տեխնոլոգիաների, գիտատեխնիկական առաջընթացի դարաշրջանում: Համաշխարհայինացման ամենակուլ, հզօր մեքենան համահարթեցնում է ամէն ինչ, իրար է խառնում մշակոյթներն ու քաղաքակրթութիւնները, ազգերն ու դաւանանքները: Աշխարհը փոքրանում է, աշխարհը շատ արագ է փոփոխւում եւ այդ փոփոխման ու փոքրացման հետեւանքով տեղի են ունենում երեւոյթներ, իրադարձութիւններ, որոնք ե՛լ դրական, ե՛ւ բացասական ազդեցութիւններ են ունենում հասարակական զարգացումների վրայ:

Մարդկութիւնը մի կողմից վայելում է արդիականացման բարիքները, միւս կողմից՝ իրեն զգում կեղեքուած, մերկ ու անպաշտպան՝ օտարուած բնութիւնից, իր ազգային ոգուց

ու ինքնութիւնից, կեանքին իմաստ ու գեղեցկութիւն հաղորդող ինքնատիպ սովորոյթներն ու աւանդոյթները, նիստ ու կացը, ազգային մշակոյթն ու մայրենի լեզուն կորցրած:

Եթէ այսօր մենք միասին կարողանում ենք նոր, բարձր տեխնոլոգիաների միջոցով աւելի զարգացած եւ հետաքրքիր դարձնել մեր կեանքը, ապա համաշխարհայինացումը կուլ է տալիս փոքր ազգերին՝ համահարթելով նրանց մշակոյթները:

Փոխւում են ժամանակները, չափանիշներն ու արժէքները, փոխւում են գոյութեան հիմքերը: Համաշխարհայինացման ամենահզօր ուղիներից մէկը դարձել է խառն ամուսնութիւնը: Անկասելի մի երեւոյթ, որի միակ արդարացումը, թերեւս, սէրն է՝ ամենահզօր զգացմունքը:

Խառն ամուսնութիւնն այսօր, իրօք, դարձել է երեւոյթ, որը, բնականաբար, ազդում է մշակոյթի, ազգային ինքնութեան, հայապահպանութեան վրայ:

Ինչպէս պնդում են մի շարք գիտնականներ՝ հին յոյների ու հռոմէացիների բարձր քաղաքակրթութեան անհետացման բուն պատճառներից մէկը նրանց՝ իբրեւ ազնիւ ու ազատ ազգեր, ստորին գերի ազգերի հետ խառնուելն էր: Ըստ նրանց, հին մշակոյթների մահացման հիմնական պատճառը եղել է արեան խառնումը:

Ընտանիքն ազգի գոյութեան հիմնասիւնն է, այն սերնդագործութեամբ ապահովում է ազգի ժառանգական յաջորդականութիւնը, իրականացնում իր ներսում աճող նոր սերնդի ազգային հիմնական դաստիարակութիւնը: Բնականաբար, ընտանիքին ապագայնացումը, որն իրականացնում է արիւնախառնութեամբ եւ օտար բարքերի ընդօրինակմամբ, կործանարար է ազգի գոյութեան համար: Խառն ամուսնական ընտանիքում որքան էլ ամուսինները լինեն լայնախոհ կամ փոխադարձ սիրով կապուած, միեւնոյնն է, նրանց հոգեկերտուածքի, էութեան բնական տարբերութիւնները, ինչ խօսք, ունենալու են իրենց դրսեւորումները: Ամուսիններից մէկը զիջելու է իր ազգային ինքնութիւնը՝ ընտանիքը չքայքայելու կամ այլ պատճառներով, իսկ նրանց երեխաները երկուութեան մէջ են ապրելու, նրանց ներսում երկու տարբեր մարդկային տեսակների հոգեբանական պայքար է ընթանալու:

Խառն ամուսնութիւններից ծնուած երեխաներին Լեւոն Շանթն այսպէս է բնութագրում. «Այս տեսակ յարկի մը տակ մեծացող սերունդը երկակենցաղ էակ մըն է, ջուրի ու ցամաքի վրայ միաժամանակ ապրող, բայց ոչ ջուրին մէջ կարգին լողալ գիտէ, ոչ ցամաքի վրայ մարդավարի քայլել. եւ յաճախ կը վերջանայ նրանով, որ ջուրն ալ կ'ատէ, ցամաքն ալ, թէեւ իր հոգիին խորքը լուռ տենչանք մը կը մնայ միշտ վառ կամ ջուրինը ըլլալու, կամ ցամաքինը»:

Դարեր շարունակ Հայ Եկեղեցին, արգելելով լուսաւորչական հայերի ամուսնութիւնն այլադաւանների հետ, փաստօրէն, անուղղակիօրէն մերժել է խառն ամուսնութիւնները: Մեր գրողների երկերում էլ յաճախ կարելի է հանդիպել այնպիսի մտքերի, որոնք տագնապ են հնչեցնում եւ պահանջում, որ հայ ընտանիքը գտարիւն մնայ: Եթէ որդին ամուսնանում էր օտարազգի կնոջ հետ, ծնողը կարող էր նրան զրկել ժառանգութիւնից (Սմբատ Ալիմեան՝ «Քառս»), աւելին՝ ընդմիշտ հրաժարուել նրանից՝ համարելով մահացած: Ազգային բարերար Ալ. Մանթաշեանցն իր հարստութիւնը որդիներին կտակելիս, մի կարեւոր նախապայման է դնում, որդիները կը զրկուեն ժառանգից խառն ամուսնութեան պարագային: Ռ. Պատկանեանն իր յայտնի «Վարդապետարան»ում, հայկական մորթութիւնների շարքում նշելով նաեւ օտարի հետ ամուսնութիւնը, գտնում է, որ օտարազգիների հետ չամուսնանալն արդէն հայրենասիրութեան դրսեւորում է:

Որպէսզի պարզ դառնայ, թէ որքան անկասելի է խառն ամուսնութիւնը Սփիւռքում, բերեմ մի օրինակ. սփիւռքա-



հայ բանաստեղծ Մուշեղ Իշխանն իր ողջ կեանքը նուիրել է հայապապանութեանը, եղել է ուծացման դէմ պայքարի առաջամարտիկ, սակայն նրա միակ որդին շատ-շատերի որդիների նման գնում է գտնելու նոր «սէրեր օտար» եւ ամուսնանում արաբի հետ: Ինչ էր մնում բանաստեղծին անել՝ թուրիկին սովորեցնել Կոմիտասի երգերը. «Հայ եմ ես, հայ եմ ես, քաջ Վարդանի թոռն եմ ես» ու նման ոգեկոչութիւններ, բայց պատասխանը ցաւալի է լինում.

Ըսաւ՝ «Պապի կը մոռնա՞ս,  
Ես չեմ սիրեր Կոմիտաս,  
Ես կը սիրեմ ուղքն ուր»

Եղեռնից փրկուած սերունդը չէր կարող հաշտուել գաւակներին արագօրէն դէպի ուծացում տանող խառն ամուսնութեան երեւոյթի հետ եւ տարբեր ձեւերով փորձել է խոչընդոտել: Սակայն կեանքը մնում է կեանք, եւ յաղթում է զգացմունքը:

Անշուշտ, առաւել ցանկալի ու լիարժէք է ազգային ընտանիքը, հայկական գտարիւն օճախը, որը կարիք չունի այլ սովորոյթների, մշակոյթի իւրացման, սակայն նոր գոյավիճակը նոր կենսապայմաններն այլ ուղի են կանխորոշում, եւ գնալով աւելանում է խառն ամուսնութեան ճամբով գնացողների թիւը:

Եթէ այս վերլուծութիւններից հետեւութիւններ անենք, ապա ակնյայտ կը դառնայ, որ հայ մեծերը փորձում են ամէն գնով պահպանել հայկական ընտանիքը, հայ էթնոսը, հայ արմատը: Սակայն պատմութիւնը եւ ճակատագիրը դաժան են գտնուել մեր հանդէպ: Դեռ երէկ՝ Ապրիլի 24ին, մենք ազգովին սգում էինք, խնկարկում մեր նահատակների յիշատակի համար: Թուրքիայի թեթեւ ձեռքով մենք կորցրեցինք ոչ միայն մեր հայրենիքը, մշակոյթը, 1.5 միլիոն հայութիւն, մարդիկ, ովքեր ոչ միայն գերեզման չունեցան, այլ նաեւ՝ դարձան աշխարհասփիւռ: Աշխարհի 100ից աւելի երկրներում արմատներ ձգելով՝ մենք վտանգեցինք նաեւ հայ ընտա-

նիքը՝ գտարիւն հայ ընտանիքը: Եւ այսօր արդէն անհերքելի իրողութիւն է, որ սփիւռքեան իրականութեան մէջ գնալով պակասում են զուտ հայկական ընտանիքները: Լատին Ամերիկայի երկրներում խառն ամուսնութիւնները կազմում են աւելի քան 80%: Պատճառը նաեւ այն է, որ այնտեղ վերջին ժամանակներում հայկական նոր «ներարկումներ» չեն եղել՝ համայնքը չի համայրուել այլ երկրներից ներգաղթածներով: Ամերիկայում, մասնաւորապէս Հիւսիսային Ամերիկայում եւ Գանատայում, խառն ամուսնութիւնները մօտաւորապէս 60% են կազմում: Նախկինում, իրօք, գրեթէ չէին ընդունում այլազգիների հետ ամուսնացած հայորդիներին, հիմա դրան առաւել հանդուրժողականութեամբ են վերաբերում, իսկ խառն ամուսնութիւնները, ցաւօք, աւելի են արագացնում ձուլումը, յատկապէս օտար երկրներում ապրող հայերի շրջանում:

Այսօր կան փաստեր, որ նման ամուսնութիւնները շատացել են նաեւ այլալրօն գոյգերի մօտ: Եթէ մօտ մէկ դար բաւականին «պաշտպանուած էր» Միջին Արեւելքը, ապա այսօր Միջին Արեւելքում եւս խառն ամուսնութիւնների տագնապ է հնչեցնում: Թուրքիայի հայկական համայնքում եւս աւելանում է խառն ամուսնութիւնների թիւը: Եթէ սկզբնական շրջանում դրանք բռնի ամուսնութեան, որդեգրման, կրօնափոխութեան դրսեւորումներ էին, ապա այսօր, յատկապէս զարգացած հայ երիտասարդները, ովքեր սովորել եւ սովորում են թուրքական համայնքներում, աճելով թուրքական միջավայրում՝ ընտրում են թուրք զուգընկեր եւ կազմում ընտանիք: Ակնյայտ է, որ մենք որեւէ կերպ այս երեւոյթի դէմ պայքարել չենք կարող: Ոչ ոք իրաւունք ունի արգելել մարդկանց ընտանիք կազմելու համար այլազգի զուգընկեր ընտրել: Պարզ է, որ ընտանիքի հիմքը նախ եւ առաջ անկեղծ զգացմունքն է: Մեզ մնում է միայն մտածել այդ ընտանիքների, նրանց երեխաների հայ ինքնութեան պահպանման մասին:

\*\*\*

Հայկական Սփիւռքը, որպէս կանոն, բաժանում ենք դասական եւ նոր սփիւռքների: Այդ բաժանումը յատկապէս կիրառելի է խառն ամուսնութիւնների պարագայում:

Պէտք է նշել, որ դասական կամ հին Սփիւռքը, որն իրենից մեծ մասամբ ներկայացնում է Յեղասպանութիւնը վերապրածների չորրորդ կամ հինգերորդ սերունդը, հիմնականում խառն ամուսնութեան ճանապարհով ազգային արժեքների կորստեան վտանգին ենթարկւում է



շուրջ 100 տարի, որն էլ սփիւռքահայութեան թուաքանակի վրայ թողնում է իր զգալի ազդեցութիւնը: Ըստ որում, դասական Սփիւռքը կարողացել է հիմնականում պայքարել ազգային արժեքների պահպանութեան, ազգային կառույցների ստեղծման համար՝ պահպանելով հայկականութիւնը, մշակոյթը, աւանդոյթները: Սակայն, յատկապէս Լատին Ամերիկայի երկրներում, Ա.Մ.Ն.-ում, Աւստրալիայում աւելանում են խառն ամուսնութիւնները, որոնք օբյեկտիւ հիմքեր ունեն: Յատկապէս Արգենտինայում, Պրագիլիայում, որտեղ անցեալ դարի 90ական թուականներին որեւէ «հայկական ներարկում» տեղի չունեցաւ, երազելի էր ամուսնութիւնը զուտ հայի հետ:

Հիմնախնդիրն, իրօք, արդիական է եւ պատահական չէ, որ հէնց այսօր է այն դառնում քննարկման թեմա:

Մեր առջեւ խնդիր ենք դրել քննարկել եւ բացայայտել խառն ամուսնական ընտանիքներում ազգային ինքնութեան որակների պահպանման հետ կապուած դժուարութիւնները եւ հիմնախնդիրները, որոնք վերաբերում են՝

- ա. Լեզուին.
- բ. Հայկական աւանդոյթներին եւ սովորութիւններին, նրանց պահպանմանը.
- գ. Կրօնի պահպանմանը.
- դ. Ներընտանեկան յարաբերութիւններին.
- ե. Խառն ամուսնական ընտանիքների անդամների հայկական համայնքային կեանքին մասնակցութեանը.
- զ. Համայնքի կողմից այդ ընտանիքների նկատմամբ ունեցած վերաբերմունքին.
- է. Հայրենիքի հետ կապին:

Մենք կամենում ենք նաեւ վերլուծութիւնների միջոցով գտնել այդ խնդիրների լուծման ուղիները, մշակել նման ընտանիքներում ազգային ինքնութեան պահպանման նպաստող ծրագրերը:

Հայկական ինքնութեան պահպանման հարցում մեծ կարեւորութիւն ունեն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Սփիւռքի համայնքները, համայնքային կառույցներն ու սփիւռքեան կազմակերպութիւնները: Դասական Սփիւռքում անժխտելի է նրանց դերը ազգային ինքնութեան ձեւաւորման, մայրենիի, ազգային աւանդոյթների եւ սովորոյթների պահպանման ու փոխանցման գործում: Նոր Սփիւռքում ձեւաւորուած կամ ձեւաւորող հայկական կառույցներն ու կազմակերպութիւնները նոյնպէս ջանքեր են գործադրում խառն ամուսնական ընտանիքների եւ խառն ամուսնութիւնների պայմաններում ծնուած երե-



խաների՝ հայկական համայնքային կեանքին համարկելու, նրանց ազգային արժեքներով դաստիարակելու ուղղու- թեամբ:

Երիցս համոզուած ենք, որ ցանկացած հայկական ընտա- նիքում հնարաւոր է լուծել հայապահպանութեան խնդիրը, եթէ ազգութեամբ հայ գոյգը հայրենասէր է, նուիրուած է հայութեանն ու Հայաստանին: Բնական է, որ շատ յաճախ նման ընտանիքներում բախում են մշակոյթները, տարբեր ականդոյթները, լեզուները, երբեմն՝ հաւատները: Այս դէպ- քում առաւել դժուար ու բարդ վիճակում յայտնուում է երե- խան: Նա իր ինքնահաստատման, ինքնաճանաչողութեան ամբողջ գործընթացում երկընտրանքի առաջ է՝ ո՞րն ընտրել: Հարց է առաջանում, թէ ի՞նչ արժեհամակարգով է երեխան մեծանալու: Սա մեր ամենադժուար, ամենամեծ խնդիրն է, եւ այս առումով, բախում ենք մի շարք խնդիրների հետ.

- Արդեօ՞ք երեխան կը սովորի հայերէն, թէ՞ ոչ:
- Արդեօ՞ք երեխան կը դաւանի հայ եկեղեցուն, թէ՞ ոչ:
- Արդեօ՞ք երեխան կը կապուի հայկական համայնքի հետ, թէ՞ ոչ:

Երեխան կ'ընկալի՞, կ'ընդունի՞ իր հայ լինելը, իրեն հայ կը զգա՞յ, թէ՞ ոչ:

Արդեօ՞ք երեխան կը հասկանայ, իրենը կը համարի՞ հայ- կական մշակոյթը, թէ՞ ոչ:

Եւ վերջապէս երեխան արդեօք ցանկութիւն կ'ունենա՞յ երբեւէ այցելել իր ծնողներից մէկի՞ հայ ծնողի պատմական հայրենիքը:

Եթէ մենք կարողանանք երեխայի գիտակցութեանը հասցը- նել, նրան զարգացնել եւ հնարաւորինս օգնել, նպաստել այդ խնդրի դրական լուծմանը՝ խառն ամուսնութիւնից ծնուած երեխայի հայ ինքնութեան պահպանմանը, եթէ կարողանանք

նրան ներգրաւել համայնքային կեանքի մէջ, ապա նա հնա- րաւորութիւն կ'ունենայ մեծանալ հայկական ազգային մի- ջավայրում: Կարծում ենք, դա կը լինի կարեւորագոյն քայլ:

Այս ուղղութեամբ ի՞նչ պէտք է անի հայոց պետութիւնը, հայ եկեղեցին եւ հայկական Սփիւռքը:

Հայաստանում խառն ամուսնութիւնների խնդիրը մեզ չի անհանգստացնում. եթէ Հայաստանում կան խառն ամուս- նութիւններ, միեւնոյնն է, դրանց արդիւնքնում ծնուած երե- խաներն ապրում են հայկական միջավայրում, սովորում են հիմնականում հայկական դպրոցներում, եւ նրանց հայկա- կան ինքնութեան պահպանման խնդիրը գոյութիւն չունի կամ առանձնակի սրութիւն չունի:

Հ. Հ. արդարադատութեան նախարարութեան տուեալնե- րի համաձայն, 2000-2009 թթ. Հայաստանում գրանցուել է 8889 ամուսնութիւն արտասահմանցիների հետ, որոնցից 2000 թ.՝ 473, 2001 թ.՝ 642, 2002 թ.՝ 682, 2003 թ.՝ 732, 2004 թ.՝ 946, 2005 թ.՝ 864, 2006 թ.՝ 983, 2007 թ.՝ 1131, 2008 թ.՝ 1192, 2009 թ.՝ 1244 ամուսնութիւն: Ըստ Հ. Հ. արդարադատութեան նախա- րարութեան տուեալների, արտերկրի քաղաքացիների հետ ամուսնութիւններում տղամարդկանց եւ կանանց յարաբե- րութիւնը 50-50 է: Թէ այդ ընտանիքներից քանի՞սն են Հա- յաստանում բնակուում, ի հարկէ, դժուարանում ենք ասել, որովհետեւ երբեմն խառն ամուսնութիւնները գրանցուում են Հայաստանում, բայց հետագայում գոյգերը տեղափոխուում են այլ երկրներ:

Առաւել անհանգստացնող են յատկապէս ԱՊՀ երկրների տարածքում գրանցուած խառն ամուսնութիւնները, քանի որ դրանց նպաստում են առաւելապէս քրիստոնէական մի- ջավայրը, լեզուն, կրթական, մշակութային նմանութիւննե- րը, որոնց արդիւնքում այս տարածքում խառն ամուսնու- թիւններն աւելի յաճախ են գրանցուում, ինչն էլ ուժացման գործընթացի վրայ շատ աւելի մեծ ազդեցութիւն է ունենում:

\*\*\*

Խառն ամուսնութիւնները ներկայ համաշխարհայնաց- ման գործընթացներում առաւել լայն ընդգրկում են ստա- նում: Հայ ժողովուրդը, որի 2/3ը բնակուում է հայրենիքից դուրս, այդ վտանգին ենթարկուում է առաւել մեծ չափերով: Երիտասարդ մարդը, որին նախ եւ առաջ հետաքրքրում է կրթութիւնը, մարդկային կամ քաղաքական առաջընթացը, առաւել շատ է կտրուում հայկական կեանքից, եւ այն միջա- վայրում, որտեղ նա հասունանում, դառնում է աշխարհաքա- ղաքացի եւ կապուում այլ ազգերի ներկայացուցիչների հետ, իրար են խառնուում երկու մշակոյթ, երկու սովորոյթ, երկու ականդոյթ, երկու կենցաղ, երկու լեզու, երբեմն նաեւ՝ երկու կրօն:

Այսօր մեր առջեւ ծառայած ամենամեծ մարտահրաւէրն ուժացման անտես ուրուականն է, որ ամէնուրեք կլանում է հայ ժողովուրդի գաւակներին՝ կոտորատելով մեր տոհմածաւի դալար շիւքերը: Իւրաքանչիւր հայ, ով գիտակցում է իր ազ- գային ինքնութիւնը, նա պարտաւոր է դառնալ հայապահ- պանութեան զինուոր ու նուիրեալ՝ գոնէ իր ընտանիքում,



առաւել եւս, եթէ իր ընտրեալն այլ ազգի ներկայացուցիչ է: Այս խնդիրն առաւել հրատապ է դառնում, եթէ նա ապրում է Սփիւռքում, եւ ոչ թէ հայրենիքում:

Ակնյայտ է, որ խառն ամուսնութիւնների դէպքում Սփիւռքում առաւել վտանգւում են հայապահպանութիւնը՝ հայ ընտանիքի սովորոյթները, ասանդոյթները, որոնց պէտք է ուշադրութիւն դարձնեն պետութիւնը, Սփիւռքի կառույցներն ու եկեղեցին: Անհրաժեշտ է բազմակողմանիօրէն, խորապէս ուսումնասիրել, վերլուծել երեւոյթը, այլ ժողովուրդների փորձը եւ գտնել խառն ամուսնական ընտանիքներու հայկական ինքնութիւնը պահպանելու ուղիներ: Թէկուզ, ինչպէս բանաստեղծն է ասում՝ «Կէս առ կէս»:

\*\*\*

Այսօրուան հրամայականն խառն ամուսնական ընտանիքներում ազգային ինքնութեան, մշակոյթի, ասանդոյթների եւ այլ արժէքների պահպանումն է: Մենք պէտք է ձգտենք հասնել այն բանին, որ նման ընտանիքներում ճանաչեն, սիրեն սեփական արմատները, Հայաստանն ընկալեն եւ ընդունեն որպէս հայրենիք, դառնան հայ լեզուի, ոգու ու մշակոյթի կրողն ու փոխանցողը, հնարաւորինս յաճախ այցելեն Հայաս-



տան, կապուեն հայրենի հողին, ջրին ու ժողովրդին:

Հայկական պետութիւնն այսօր փորձում է աջակցել Սփիւռքի հայրենակիցներին այս ուղղութեամբ իրականացուող աշխատանքներում, նրանց հետ համատեղ մշակել եւ իրականացնել համապատասխան ծրագրեր ու միջոցառումներ: Հետեւաբար, իւրաքանչիւրս ունենք անելիք այս ոլորտում ընդունելով եւ հասկանալով, որ խառն ամուսնութիւններն այլեւս իրողութիւն են եւ գալիս են լրացնելու մեր համազգային օրակարգը: Այս առումով անհրաժեշտ է:-

- Հիմնահարցի վերաբերեալ Հ.Հ. Սփիւռքի

նախարարութեան կողմից մշակել համալիր ծրագիր:

- Դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ին, օգտագործել հայ Առաքելական Եկեղեցու դերն ու նշանակութիւնը՝ նման ընտանիքներում հայ ինքնութեան որակների պահպանման ուղղութեամբ:

- Դիմել Սփիւռքի կառույցներին, կազմակերպութիւններին՝ ազգային ինքնութեան որակների պահպանման նպատակով մշակելու եւ իրականացնելու անհրաժեշտ ծրագրեր խառն ամուսնական ընտանիքներում (երեխաներին ընդգրկել ազգային երգի, պարի խմբակներում, կիրակնօրեայ դպրոցներում, նրանց համար ձեռնարկներ պատրաստել):

with the complements of

# Restaurant Al-Mayass

# ԽՕՍԵԼՈՒ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՄ

**Խ**օսելու, եւ շատ խօսելու ախտ մը մեր հանդէսները, մեր հաւաքօյժները եւ մեր հանդիպումները վարակած է:

էր երբեմն, որ լուրը առաքինութիւն կը համարուէր, այսօր՝ ընդհակառակը:

Տեսակէտ, կարծիք համոզում յայտնելու մարմաջ մը կը լափէ հոգին մեծին ու պզտիկին:

Խօսիլ կ'ուզեն բոլորն ալ, մանաւանդ երբ սանձ ու սահման չէ դրուած այդ ախտին:

Ու ամէն ոք, ոտքի ելլելուն պէս կը կարծէ ինքզինքը մանուկներու առջեւ ու դուրս կը թափէ շրթներէն, խելապատակէն փչած ամէն կարծիք, այն երանելի միամտութեամբ, թէ մարդրիտներ են իր արտաբերածները:

Օրակարգի հարց է, օրինակ, քաղաքական, մանկավարժական, գրական կամ հասարակական խնդիր մը, հարիւր ներկաներու վրայ գրեթէ իննսուներ պատրաստ են խօսք առնել՝ ճառելու:

Չենք ակնարկել այն միւս ճառերուն, որ կը կատարուին բեմերէն հանդիսաւոր առիթներով, եւ որոնց մէջ եւս մկրատելու, եւ յապակելու արժանի խեղճանքներ պակաս չեն յաճախ:

Հրապարակային ելոյթներու մէկ մասը վերագրեցինք ճառախտի:

Ունկնդիրները արհամարհող ու անոնց համբերութիւնը չարաչար գործածող բեմբասաց մը, նկատի պէտք է ունենայի վերջոյ, որ ճառելու իր ախտով կրնայ վրայ տալ ինչ որ մինչեւ այդ օրը չահած էր լուրով:

Մեր աշխարհի եզակի ու մեծ մտքերը միշտ բեմերու զարդեր եղած չեն:

Հռետորութեան մէջ համբաւ հասած հսկաներ Կուրիտիլ-իանոս, Սոկրատ, Դիմոսթենէս, Կիկերոն, Յովհան Ոսկեբերան եւ ուրիշներ խօսքին պերճանքին միացուցած են միշտ բանականութեան եւ տրամաբանութեան նպաստը. եղած են պատրաստուած ու բազմակողմանի անձեր ու իրենց տաղանդին լոյսը խառնած են իրենց խօսքին շքեղութեան:

Առանց կուռ փաստերու, առանց փորձառութեան, առանց վերջապէս նիւթի մը տեղեակ ըլլալու, ու տակաւին միացնելու այս բոլորին սրտէն յորդող անկեղծութեան ճառագայթները, կարելի չէ յաղթանակներու մասին որոճալ:

Այս բոլորը մոռցուած են այսօր:



Մարդիկ մէկ բան միայն գիտեն, վերջին խօսողը կը դառնայ յաղթական. ուղիղ կամ սխալ իր ըսածներն են որ կը նրկատուին ճշմարիտ:

Յեցած այս միամիտ տեսակէտին ու ազդելու պատրանքով զանգուածներու երեւակայութեան եւ մտքին, ամէն ոք կ'աշխատի դիմացինէն քիչ մը աւելի խօսիլ:

Այսօր փնտռուածը քիչ, բայց իրաւ խօսքը չէ, այլ՝ կծու եւ վիրաւորականը:

Ազնիւ ու գաղափարական տեսակէտի մը նպաստը մոռցած, բամբ ձայնով ու արուեստական թոնով հնչուած կամ ճամարտակուած խօսքեր են փնտռուածները, անոնցմով հակառակորդը ճգմելու եւ իրաւունք ձեռք ձգելու միամտութեամբ:

Ու քանի կ'իջնենք մտքի պատրաստութեան եղկելի աստիճաններուն, այնքան փնտռուած ու ծափահարուած կը տեսնենք այս ռամիկ յատկութիւնները զանգուածներու կողմէ:

Հաւաքօյժի մը մէջ շատ ու բարձր խօսողին կ'երթայ ծափերուն մեծ մասը:

Արտասանութեանց ատեն դու ձայնն է փնտռուածը, երանգներու քաղցրութիւնը, շեշտերու եւ ոլորտներու, երկարներու եւ ելեէջներու յատկութեանց կշռոյթը մոռացութեան տրուած հնութիւններ են այլեւս:

Ատկէ՝ ամէն կողմ բեմերու զարդ նկատուած արտասանողներէն երկու հոգի չէք կրնար գտնել, որ կարենան, օրինակ, տալ ձեզի Մեծարեցի «Գիւղը», «Միրերգը», «Զրտուքը» եւ այլն:

Երբ Փարիզի աշխատաւորութիւնը խելայեղ կը ծափահարէր անառարկելիօրէն մեծ հռետոր Ժան Ժորժէսը, միջազգային մտաւորական աշխարհի մեծութիւններ կու գային Գոլէճ Տը Ֆրանսի մէջ Հինգշաբթիէ Հինգշաբթի (եթէ չենք սխալի) ունկնդրել էքոլ Նորմալ Միւսիէրիէրի մէջ անոր դասընկերը եղող Չորդ դարու մեծագոյն իմաստասէրը՝ Հանրի Պերկսոնը, որ շատ հեռու էր միջակ հռետոր մը անգամ նկատուելէ:

Ճառախտը միջակութիւնները վարակած պատուհաս մըն է:

Մեր մէջ ան ժամանեց Արեւելքէն:  
 Օսմանեան Սահմանադրութենէն վերջ  
 խօսքի ազատութեան հետ մտաւ ազգային  
 մեր բեմերէն ներս, դառնալու համար յետոյ  
 տիրապետող մեր հաւաքովիներուն, մեր ժողովներուն եւ մեր հանդիպումներուն ընթացքին:

Այսօր ամէն մարդ աւելի կամ պակաս  
 վարակուած է անկէ:

Ճառել կ'ուզեն բոլորն ալ: Լուելը կը նկատեն իմաստութեան պակաս, եւ որովհետեւ գգուական ինչ որ բան ունի իմաստութիւնը, ամէն ոք կ'ուզէ առաջին երեւիլ այս մարզին մէջ ու կզակ շարժել:

Այս անպատասխանատու արտաբերութեանց ընթացքին է որ յաճախ կը պատահին անտեղի վերագրումներ, վիրաւորանքներ, ու անգամ նենգ խաղեր:

Հրապարակային այդ ելոյթները հեռու շինարար ու կրթիչ ըլլալէ, կը դառնան համեստութիւններ արատաւորելու, արժանիքներ ցեխոտելու եւ անախորժութիւններ ստեղծելու առիթ:

Կը պատմուի թէ չաստուածները եզիպտացիները պատժելու համար եօթը տեսակ փորձանք զրկեցին անոնց, բայց Փարաւոնին հպատակները չզգաստացան բնաւ: Այն ատեն յուսահատ ժողովի նստան անոնք, ու իրենցմէ մէկը յղացաւ որպէս



վերջին պատիժ ճառախօսելու ախտը ուղարկել: Արդիւնքը եղաւ հրաշալի:

Այն որ քանի մը քաղաքացի կը տեսնէր իր շուրջը, կը բարձրանար ու կը սկսէր ճառ խօսիլ:

Երկրին ամէն կողմը կառուցուեցան ամպիրոններ ու ճառողներու բանակ մը բան գործ ըրաւ ճառ խօսիլ ամբողջին: Ունկնդիր քաղաքացիներ, իրենց գործերը ձգած, կ'երթային լսել խօսողները: Այդպէս երեսի վրայ

մնացին բոլոր աշխատանքները, ու քիչ ատեն ետք սովոր տիրեց երկրին:

Այն ատեն հասկեցան եզիպտացիք, որ գործը աւելի կ'արժէր խօսքէն, թէ ճառերով ու դատարկ ըսի-ըսաներով երկիր չի կառուցուիր եւ թէ լուռ աշխատանքով կը կերտուին մեծ եւ գմայլելի գործերը:

Հովիւներու սերունդ մը կրնայ յաջորդել այսօրուան սերունդին, եթէ գործին արժէքը ըմբռնելի չդարձուի նորերուն, եթէ շարունակուի ճառախտով վարակել զանոնք:

Չմոռնանք վերջապէս, որ լուսթիւնը եթէ ոսկի է, խօսիլը արծաթ չէ յաճախ:

1952

Վարդան Գեորգեան








- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
 32-38, Hanrabedoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europohotel.am

[www.europohotel.am](http://www.europohotel.am)

Reservations  
 Studio/ICE/2005/PAES

# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, ԻԳ. ՄԱՍ

«Հաճոյքով կ'արձանագրենք,- կը գրէ «Ազգակ»ի Լաթաք-իոյ թղթակիցը,- տեղւոյս Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղին կազմու-թիւնը: Ան իր 30ի մօտ անդամներով արդէն իսկ լծուած է քրաջան աշխատանքի:

«Անոնք նոյնիսկ դիմեցին զինուորական իշխանութեան, մարզական փորձեր կատարելու բանակի խաղաղաշտին վրայ. բանակը արտօնած է» («Ազգակ, 15 Փետրուար 1928):

Պէյրուսի մէջ հետզհետէ ֆուլթայօրը կը ստեղծէ լայն հե-տաքրքրութիւն, կը դառնայ օրուան խաղը: Եւ որպէսզի խումբերու ուժերը կշռուէին, հասկցուէին ու խաղերը որոշ

եզրակցութեան մը յանգէին, 2 Փետրուար 1928ին կը սկսին ախոյեական մրցումները: Այս մրցումներուն կը մասնակ-ցին Հ.Մ.Ը.Մ., Սիսուան, Ֆրանսական համալսարան, Ռընե-սանս, Իւնիոն Սփորթիւ եւ զինուորական խումբերը: Ախոյեանութեան դրուած բաժակը կը տրամադրուի Ռը-պէզ ընտանիքին կողմէ: Այս բաժակը շահելու համար, խումբ մը պէտք է շահէր յաջորդական երկու տարիներու առաջնութիւնը:

Սկսուտական խումբերու կազմութիւնն ու մարզումը գլխաւոր նպատակակէտ է: Վարչութիւնը «Ազգակ»ի 3 Մարտ 1928ի թիւին մէջ կը յայտարարէ կոչի ձեւով. «Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղը ձեռնարկած է սկսուտական նոր խումբ մը կազմութեան, կը հրաւիր-ւին յարգելի ծնողները արձանագրել տալու իրենց գա-ւակները մինչեւ 20 Մարտ 1928»:

Վարչութիւնը, միութեան շրջագիծը ընդարձակելու գեղեցիկ գաղափարէն մղուած, Մարտ 17ին, Շաբաթ իրկուուն, մտերմական երեկոյթ մը կու տայ միութեան համակիրներուն Ուայ Տապլեու Սի էյի սրահին մէջ:

«Ներկայ էր ընտրանի երկսեռ բազմութիւն մը: Ժի-րայր Պալեանը պատմեց, թէ նիւթական ի՛նչ դժուա-րութիւններու մէջ սկսած են գործի, ինչպէս յարաբե-րած են տեղացիներուն հետ, կրցած են տարածուիլ Սուրիոյ մէջ՝ Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Չահլէ, վերջապէս թէ ի՛նչպէս կրցած են Ա. եւ Բ. ողիմպիա-կաններ տալ Պէյրուսի մէջ. բան մը, որ տեղացի միու-թիւններ տակաւին չեն կրցած ընել:

«Օրուան բանախօս Սուրէն Բաբախեան կ'ընդգծէ «Մեր ազգային գոյութիւնը պաշտպանելու առաջին ազգական է նոր սերունդը, պէտք է գուրգուրանք անոր վրայ: Առողջ սերուն-դի մը մէջ միայն կարելի է գտնել առողջ հոգեբանութիւն եւ պայծառ խղճմտանք...»

«Հանդէսին մաս կը կազմեն նաեւ սկսուտները իրենց գա-ւելչտով: Ներկաները հիւրասիրուեցան թէյով: Կը խօսի տղթ-թոփճեան ու իր տասը տարեկան մանչը կը յանձնէ Հ.Մ.Ը.Մ-ի խնամքին: Գալէնտէրեան բաժակ մը կը նուիրէ Պէյրուս-Դա-մասկոս մրցումի մը համար», («Ազգակ», 28 Մարտ 1928):

Անդին, Դամասկոսի խումբը մրցում մը կ'ունենայ տեղ-ւոյն զինուորական վարժարանի նշանաւոր խումբին դէմ: Լաւ յաղթանակ մը կը տանի. այս առթիւ Դամասկոսէն կը գրեն.

«Արդեօք այս յաղթանակը լաւ դաս մը չէ՞ կարգ մը ազգա-յիններու, որոնք անմեկնելի տգիտութեամբ կը ջանան քայ-

քայլի Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղը» («Ազդակ», 26 Մարտ 26, 1928):

Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, ամէն տեղ, յաղթանակէ յաղթանակ իրենց թափը կ'առնեն: Դամասկոսի փառաւոր յաղթանակէն ետք, Ձահլէն, 1928 Մարտ 25ին, հազար հոգիներու ներկայութեան պարտութեան կը մատնէ տեղւոյն Ֆրէշներու եւ տեղական վարժարաններու միացեալ խումբը: Այս հաղորդագրութենէն ետք, թղթակիցը կ'աւելցնէ. «Գնահատելի է Հ.Մ.Ը.Մ-ի Ձահլէի մասնաճիւղը, որ տեղւոյս հայ երիտասարդութեան մէջ կը զարթնեցնէ սէր դէպի մարմնակրթական կեանք: Ձանոնք ի մի հաւաքելով կը ստեղծէ հայ կենսական տաքուկ մթնոլորտ մը՝ անոնց մէջ ազգային ոգին, արժանապատուութիւնը, հեռու պահելով զանոնք սրճարան եւ ապագայնացուցիչ միջավայրերէն» («Ազդակ», 27 Մարտ, 1928):

Պէյրուսի Ա. խումբին Հալէպ այցելութենէն ետք, որ ունեցաւ բարոյական մեծ նշանակութիւն, նոյն կապի սերտացման համար, Դամասկոսի մէջ շոգեկառքի ընկերութենէն ձեռք բերուած կէս գին երթեւեկի տոմսերը իրենց ձեռքերուն մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղի Ա. եւ Բ. խումբերու տղաքը կը բարձրանան շոգեկառք: Կ'երթան Դամասկոս՝ տեղւոյն մասնաճիւղի համապատասխան խումբերուն հետ մրցելու:

Խումբերը իրենց հետ կը տանին, Մարտ 17ին, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղին կազմակերպած երեկոյթին առիթով Հայկ Գալէնտէրեանի կողմէ նուիրուած բաժակը: Իրենց հետ



կը տանին նաեւ, ինչպէս Հալէպի պարագային, այցելութեան գաղափարախօս նուէրը՝ մետաքսէ կտորի վրայ, Հայկ Պուտագեանի եւ Վարդան Շլուկեանի կողմէ բանուած Հ.Մ.Ը.Մ-ի խորհրդանիշը կրող դրօշը: Տարուած բաժակը պիտի սրուէր Ա. խումբերէն յաղթականին, իսկ դրօշը՝ Բ. խումբերուն:

Խումբերը արեւածագին ոտք կը դնեն Դամասկոսի կայարանը: Կայարանը բարի գալուստի եկած էին Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները եւ անդամները: Տղաքը կ'առաջնորդուին եկեղեցի: Արարողութիւններէ ետք, պտոյտ կը կատարուի քաղաքին մէջ:

Դամասկոսի մրցումները տեղի կ'ունենան Ապրիլ 9ին: Ներկայ կ'ըլլայ հայ եւ օտար հասարակութիւն մը: Երկու մրցումներուն ալ Պէյրուսի յաղթական կ'ելլէ: Նոյն օրը Ձահլէի Հ.Մ.Ը.Մ-ը կը յաղթէ Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան խումբին:

Պէյրուսի մարզասէր հասարակութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի անդամներուն համար, սպասումի օր մը կը դառնայ 15 Ապրիլ թուականը: Այդ օր, Հալէպի մասնաճիւղի Ա. խումբը պիտի մրցէր Պէյրուսի մասնաճիւղի Ա. խումբին հետ, Հ.Մ.Ը.Մ-ի խաղաղայրին վրայ, Ֆրէշ Էլ Շրպպէ:

Այս այցելութիւնները քաղաքէ քաղաք, յայտարար նշան էին միութեան կենսունակութեան, որ ոտքի կանգնած՝ կը կտրէ հսկայ տարածութիւններ, կը հարթէ նիւթական արգելքներ ու հանրութեան կը ներկայանայ որպէս կազմակերպուած ուժ, ունենալով նպատակ, որով հեռանկար...





«Անցեալ տարի, Հ.Մ.Ը.Մ.Ս. Պէյրուսի մասնաճիւղին Ֆուլթպոլի Ա. խումբին Հալէպ այցելութենէն ասդին կը խօսուէր Հալէպի խումբին Պէյրուսի գալու մասին, եւ այդ իրականացաւ:

«Ապրիլ 13, Ուրբաթ գիշեր, Պէյրուսի հասաւ Հալէպի խումբը 18 հոգիով: Կայարան դիմաւորելու փութացեր էին մասնաճիւղին 30ի մօտ անդամներ, որոնք իրենց եղբայրներուն հետ գիրկընդխառնուով մը թնդացուցին «Յառաջ նահատակ»ը...

«Ապրիլ 15ին տեղի ունեցաւ մրցումը 1500է աւելի ներկաներու աչքերուն տակ, Հ.Մ.Ը.Մ.Ս. Նոր խաղավայրին վրայ, ուր առաջին խաղը տեղի կ'ունենար»:

Հալէպի խումբը իր յաջորդ մրցումը կ'ունենայ Ռընեսանսի հետ, որմէ կը պարտուի:

Երեկոյեան, Պէյլէրեաններու բնակարանին մէջ տեղի կ'ունենայ Հալէպի եւ Պէյրուսի անդամներուն հաւաքըյթը: Հաւաքըյթին տեղի կ'ունենան արտասանութիւն, երգ, նուագ, բանախօսութիւն, որոնք նպատակ ունէին գօտեպնդելու Հ.Մ.Ը.Մ.ականները՝ ամուր հաւատքով անսայթաք քայլելու Հ.Մ.Ը.Մ.Ս.ի գծած ճամբայէն: Յաջորդ օր, Քիւրսակի մէջ, խումբերը կը հիւրասիրուին Յարութիւն Ճենապեանի կողմէ: Հոս եւս բարեմաղթութեան խօսքեր կ'արտասանուին՝ ապագայ աւելի սերտ գործակցութեան մը համար քոյր խումբերուն միջեւ («Ազդակ», 28 Ապրիլ 1928):

Հ.Մ.Ը.Մ.Ս.ի տարածուելու վրայ եղող ընտանիքին մէջ Նոր մասնաճիւղի մը ծննդեան ձայնը

նր այս անգամ կու գայ հեռաւոր Ալեքսանտրէթին:

«Մարմնակրթանքի տեսակէտով խորունկ քունի մէջ գտնուող Ալեքսանտրէթը արթնցաւ վերջապէս 1927 Մայիս 29ին տեղի ունեցող հեծեալանիւրի մրցումին առիթով:

«Մրցումը տեղի ունեցաւ նահանգապետին նախագահութեան ներքեւ, կը մասնակցէին հայ, յոյն, արեւի 16 հոգիներ, որոնց մէջ առաջին կ'ելլեն երկու հայ պատանիներ՝ Պերճ Սերտարեան եւ Վարդան Պալեան: Հայ հասարակութեան խանդն ու եռանդը չափ ու սահման չունէր» («Ազդակ», 8 Յունիս 1927):

Այդ հայ հասարակութիւնը աւելի ուրախանալու առիթ պիտի ունենար, երբ այդ թուականէն մօտ տարի մը ետք, Ապրիլի գեղեցիկ օր մը, «Նոր սերունդի Ֆիզիքական դաստիարակութեան անհրաժեշտութիւնը լաւ ըմբռնած քանի մը երիտասարդներ, դուրսէն եկած Նոր ուսերու հետ, հիմը դրին Հ.Մ.Ը.Մ.ի Ալեքսանտրէթի մասնաճիւղին:

«Այս նորակազմ մասնաճիւղին առաջին ժողովը տեղի կ'ունենայ 1 Ապրիլին, Կիրակի կէսօրէ ետք: Տասնհինգ անդամներու ներկայութեան կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի անհրաժեշտութեան մասին քանի մը խօսքեր, որմէ վերջ կ'ընտրուի հին հոգինոց առժամեայ վարչութիւն:

«Վարչութիւնը ձեռնարկած է մարզական երեկոյթ մը, անմիջական ծախսերը հոգալու համար: Ունի Ֆուլթպոլի խումբ, իր փորձերը կ'ունենայ, կը պատրաստուի գինուորական խումբին հետ բարեկամական մրցումի մը («Ազդակ», 21 Ապրիլ 1928):

Պէյրուսի վարչութիւնը



որոշել է ետք որ Պէյրուսի մասնաճիւղին տարեկան երրորդ ողիմպիականը կատարուի 3 Յունիս 1928ին, անդամները ընդհանուր ժողովի կը հրաւիրէ Մայիս 6ին, Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութեան ակումբը:

Անդամական ընդհանուր ժողովը կը կատարուի օրակարգ ունենալով՝ վարչութեան վեցամսեայ գործունէութեան հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն: Ժողովի ընթացքին նկատի առնելով Հայկ Գալէնտէրեանի նիւթական եւ բարոյական լայն աջակցութիւնը միութեան վերելքին, միաձայնութեամբ գինք պատուոյ անդամ կ'ընտրեն: Իսկ նոր վարչութեան անդամ կ'ընտրուին Մարտիկ Պէյլէրեան, Միսակ Միմոնեան, Սուրէն Բաբախեան, Վահան Ղազէրեան, Ժիրայր Պալեան, Գ. Ներսէսեան, Յակոբ Գասապեան, Ալպէր Յակոբեան եւ Յակոբ Հայրապետեան:

Նորընտիր վարչութիւնը իր առաջին նիստին իսկ, 8 Մայիս 1928ին, օրակարգի անմիջական նիւթ պիտի դարձնէր 1929 տարեշրջանին համար «Ազգակ» օրաթերթին կողմէ պատրաստուելիք տարեգիրքին յօդուածով մը ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը Պէյրուսի մէջ եւ անոր զարգացումը: Վարչութիւնը պիտի պատասխանէր Նիկոսիայէն եկած նամակի մը, որով առաջարկուած էր 18 հոգիով Լիբանան այցելել, պայմանով որ «պանդոկի, սնունդի եւ վերադարձի ծախսերը Պէյրուսի հոգար»: Կ'որոշուի «մերժողական պատասխան տալ, նշելով հանդերձ որ մեզի համար որքան փափաքելի է իրենց այցելութիւնը, պիտի չկարողանանք ընթացք տալ, անհրաժեշտ գումարին հայթայթումը ներկայ պայմաններուն մէջ մասնաճիւղիս համար անկարելի ըլլալուն»: Նորընտիր վարչութեան առջեւ կային մանաւանդ ողիմպիականին հետ սերտ կապ ունեցող ինդիւրներ՝ Քրանսական դաշտին համար արտօնագիր, յայտագրի պատրաստութիւն եւ տպագրութիւն, տոմսերու սպասում, Անթիլիասի նուազախումբին ապահովում, օրուան թագուհիի, պատուոյ օրիորդներու, իրաւարարի եւ յանձնախումբի անդամներու նշանակում: Ասոնց հետ նաեւ ոչ-անդամներու ողիմպիականի մասնակցելու վերջնական որոշում, իսկ առաջը առնելու համար դաշտին վրայ պարզուող Կիրակի օրերը անկանոն պատկերին, կտրուկ եւ վերջնական սկզբունքի մը որդեգրում մը, ուստի «որոշուեցաւ թերթի միջոցաւ յայտարարել, թէ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը կը տրամադրէ իր խաղավայրը, անխտիր, բոլոր հայ մարմնակրթական միութիւններուն, շաբթուան օրերը՝ ի բացառեալ Կիրակի եւ Չորեքշաբթի կէսօրէ ետք, պայմանով որ խաղալէ երեք օր առաջ իմաց տրուի վարչութեան»:

Սուրէն Բաբախեան բանաւոր պատճառաբանութեամբ կը հրաժարի վարչութեան քարտուղարի իր հանգամանքէն, անոր տեղ կը կանչուի Կարապետ Պատուհասեան, իսկ Ֆուս-



պոլի խումբերուն հիմնական վերակազմութեան ենթարկուելու գործը կը յանձնուի Շաւարշ Պէքէրեանին ու «անհրաժեշտօրէն սկսուտական 20 հոգինոց խումբի մը կազմութեան հոգը վարչութիւնը ինք կը ստանձնէր: Ահա՛ ասանկ հարցերով ծանրաբեռնուած, վարչութիւնը կը հասնի իր երրորդ ողիմպիականին՝ 3 Յունիս 1928ին, Ռաս Պէյրուսի, Քրանսական մարզադաշտը: Օրուան թագուհին է տիկին Տամատեան, պատուոյ օրիորդներէն են Թագուհի Սարաֆեան, Անփէլ Պէզճեան, դաշտային ընդհ. քննիչ Ալպէր Յակոբեան, ընդհանուր իրաւարար Ֆուսպոլի, ընդհանուր մարզիչ Ժիրայր Պալեան, դաշտային բժիշկ Ա. Պէզճեան, իսկ յանձնախումբը բաղկացած էր հայ եւ օտար անձնակազմութիւններէ:

Ողիմպիականը կը սկսի որոշուած ժամուն: Անթիլիասի որբանոցի նուազախումբի առաջնորդութեամբ տողանցք կատարեցին մասնաճիւղին սկսուտները, մարզիկները, ֆուսպոլիստները, որմէ ետք սկսան մրցումները:

«Խաղերու աւարտին, օրուան թագուհին ու պատուոյ օրիորդները շքանշաններ բաժնեցին մրցողներուն: Մարզիկներ Հայկակ Տէր Մանուէլեան եւ Արմէն Գուլումճեան շահած էին երեքական առաջնութիւն, որով երկուքն ալ ախոյեան նկատուեցան:

Արդար լուծում տալու համար քուէ ձգուեցաւ: Քուէով ախոյեանութիւնը վիճակուեցաւ Հայկակ Տէր Մանուէլեանին, արժանանալով Հ.Մ.Ը.Մ.ի Գահիրէի եւ Հելիոպոլսոյ քոյր մասնաճիւղերու կողմէ օրուան ախոյեանին նուիրուած դեղեցիկ ու խորհրդաւոր շքանշանին:

«Վերոգրեալ գոյգ քոյր մասնաճիւղերուն եղբայրական այս նուէրին յայտարարութիւնը եղաւ տպաւորիչ եւ ընդունուեցաւ երկարատեւ ծափերով:

«Երբ նկատի առնուի մրցանիշներու բաղդատական տախտակը, յստակ կերպով կ'երեւի նախորդ ողիմպիականներու վրայ առաւելութիւն, յառաջդիմութիւն» («Ազգակ», 9 Յունիս 1928):

Ողիմպիականէն անմիջապէս ետք, վարչութիւնը շնորհակալական նամակներու կարգին կը գրէ նաեւ Գահիրէի եւ Հելիոպոլսոյ մասնաճիւղերուն իրենց նուիրած շքանշանին համար:

Վարչութիւնը բաժնելով ժիրայր Պալեանին առաջարկը, ամբողջ եղանակին իսկ շարունակելու Փոլիթպոլի խաղերը, հրահանգ կու տայ խումբերուն եւ կը յայտնէ Պէքէրեանին:

Այս բոլորին հետ սակայն, միութեան կը պակսէր հաւաքաւայր եւ թենիսի դաշտ. «յանձնախումբ մը կազմուեցաւ, որպէսզի անմիջապէս փնտռուէր ելլէ»:

Հ.Մ.Ը.Մ-ի ողիմպիականէն ետք, Ս. Նշան Ազգ. վարժարանն ալ կու տայ իրը «մեծ շքեղութեամբ Յունիս 10ին: Հ.Մ.Ը.Մ-ի վարչութիւնը, օրուան ախոյեանին կը նուիրէ շքանշան մը, իսկ Հ.Մ.Ը.Մ-ական ժիրայր Պալեան անխոնջ աշխատանք կը տանի հանդէսին ընթացքին» («Ազդակ», 16 Յունիս 1928):

Ամառ ատեն Փոլիթպոլը շարունակելու փորձը ձախողելուն, վարչութիւնը կ'որոշէ անդամական խմբային պտոյտներու դրութիւնը կիրարկել, «որպէսզի կարելի ըլլայ միու-



թեանս անդամները համախմբել եւ իրենց մէջ պահել մարզանքի ազնիւ ոգին», (Աստեճարութիւն, 25 Յունիս 1928): Առաջին պտոյտը կը կատարուի դէպի Նահր էլ Քէլպի ակը:

Խմբական պտոյտներու հետ կ'որոշուի նաեւ խմբական լողալու դրութիւնը, «Կիրակի 1 Յունիսին տեղի պիտի ունենան լողալու փորձեր: փափաքող անդամները կը հրաւիրուին ներկայ գտնուիլ առաւօտեան ժամը Յին, Ռաս Պէյ-

րուլթ: Նոյն օրը, քաղաքի Ս. Նշան եկեղեցւոյ մէջ, եկեղեցական արարողութիւններէն ետք, տեղի պիտի ունենայ մասնաճիւղիս սկաուտներուն երգման արարողութիւնը» («Ազդակ», 27 Յունիս 1928):


Մարմնակրթական միութիւն մը, ինչպիսին է Հ.Մ.Ը.Մ-ը, որ կը կիրարկէ մարմնակրթանքի բոլոր ճիւղերը, իրեն կը պակսէր այս բոլորին եռանդ տուող ոգին- նուագախումբը: Ուստի, 3 Յունիս 1928ի վարչական նիստին կ'որոշուի նուագախումբի մը կազմութեան աշխատանքներուն լծուիլ:

(Շար. 23)

*'Made from one single slice of natural Australian opal'*

# Classique®

OPAL DIAL WATCH



*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.*  
 123 Clarence Street  
 Sydney 2000  
 Australia

Phone: +61 2 9290 2199  
 fax: +61 2 9262 1630  
 Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
 Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



# ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՈՒԺԵՐԸ ՄԻԱՑՆԵԼ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ՝  
Հ.Մ.Ա.Կ.Ի 24ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ)

**Ս**փիւռքի տարածքին հայապահպանման եւ հայակերտման գործը կը սկսի տունէն ու կը շարունակուի եկեղեցիէն, դպրոցէն ու ակումբէն ներս, եւ զարմանալի չէ, որ վաղուց հաստատուած գաղութներու մէջ ազգապահպանման այս չորս խարիսխները խտացած ըլլալին քովընտի քանի մը թաղամասերու մէջ: Այսօր, տեղաշարժի պատճառով, չորսը իրարմէ ֆիզիքապէս հեռացած կրնան ըլլալ, սակայն առաքելութիւնը զանոնք կը միացնէ անտեսանելի, բայց եւ անքակտելի կապերով:

**Ստորեւ կու տանք Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը՝ Հ.Մ.Ա.Կ.Ի 24րդ Պատգամաւորական ժողովին, որուն բացումը տեղի ունեցաւ 18 Յունուար 2011ին, Թեհրանի «Արարատ» մարզաւանի «Վաչիկ Ղարաբէգեան» սրահին մէջ:**  
**Ժողովին ներկայ գտնուեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի խօսքը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան:**

Թշնամիներու դէմ: Հաւատաւոր նրւիրեալները բարեբախտաբար տակաւին քիչ մը ամէնուրեք են, Սփիւռքի չորս ծագերուն, եւ կը գործեն տարբեր անուններով: Հոս անոնք «Արարատցիներ» են, այլուր՝ «Համագալստեաններ», «ՀՕՄականներ», «Հ.Մ.Ը.Մ.ականներ» ու դեռ շարքը կ'երկարի: Բայց բաւարար չէ առանձին-առանձին պայքար մղել, այլ՝ կարեւոր, թէկուզ անհրաժեշտ է ուժերը միացնել եւ այդպէս, միացեալ ուժերով, իրարմով զօրացած ու գօտեպնդուած շարունակել պայքարը: Եւ ահա մեր ներկայութիւնը հոս, ձեր մէջ, այդ պայքարին հանդէպ մի-

ացեալ ճակատ կազմելու մեր ճիգերուն պերճախօս արտայայտութիւնն է: Արդ, իրարու հետ, զիրար ամբողջացնելով, իրարմով զօրացած շարունակենք ազգօգուտ ու ազգաչէն մեր երթը, շարունակենք պատրաստել ազգասէր ու յանձնառու նոր սերունդներ, որոնք վառ պիտի պահեն ջահը՝ մինչեւ որ հասնինք Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայրենիքի երազի իրականացման:

## ՄՍԱՅԱՆՔ

### ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՄՆ-ՈՒՄ

Հ. Հ. Սփիւռքի նախարարութեան եւ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հրատարակութիւն, Երեւան, 2010:

\*\*\*

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱԲԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հ.Հ. Սփիւռքի նախարարութեան եւ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հրատարակութիւն, Երեւան, 2010:

\*\*\*

«ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ԽԱՌՆԱՍՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ»  
Գիտագործնական համաժողովի զեկուցումների ժողովածու  
Հ. Հ. Սփիւռքի նախարարութեան հրատարակութիւն, Երեւան, 2010:

\*\*\*

HANDBOOK FOR ARMENIANS ABROAD  
Հ. Հ. Սփիւռքի նախարարութեան եւ International Labour organization-ի հրատարակութիւն, Երեւան, 2010:

\*\*\*

ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹԵԱՄԲ Համահայկական լրատուամիջոցների ղեկավարների համաժողովի Հայաստանի ժուռնալիստներու միութեան հրատարակութիւն, Երեւան, 2009

\*\*\*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՀՀՊՏ 05.12.05 Յատուկ թողարկում, Երեւան, 2010:

\*\*\*

# ԱՐԺԵՒՈՐԵՑԷՔ ՁԵՐ ՏԱՐԱԶԸ ԵՒ ԱՆՈՐ ԿՈՒՐԾՔԸ ԳԵՂԵՑԿԱՑՈՒՑԱԾ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՇԱՆԱԿԸ

«ՄԱՐԶԻԿ»-ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ  
ՊԱՍՔԷԹԻ ԱՆՑԵԱԼԻ «ԱՍՏՂ»ԵՐԷՆ՝  
ՔՈՅՐ ՇՈՂԻԿ ՇԱՌՈՑԵԱՆ-ՄԱԹՈՍԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Բաֆֆի Սիլվաեան  
ՀԱԼԷՊ



Մարզական կեանքի մէջ միշտ եղած են խաղացողներ, որոնք փայլուն արդիւնքներով եւ յաջող մասնակցութիւններով իրենց անունը արձանագրած են միութեան ոսկեմատեանին մէջ, երկար տարիներ յիշուելով իբրեւ օրինակելի անձեր ու Հ.Մ.Ը.Մ.ականներ: 1963ի

ծնունդ քոյր Շողիկ Շառոյեան-Մաթոսեան նախնական ուսումը ստացած է Ազգ. Հայկազեան վարժարանը, որմէ ետք յաճախած է Քառէն Եփփէ Ազգ. Ծեմարան: Երկրորդական դպրոցը յաջողութեամբ աւարտելէ ետք՝ կ'ընդունուի Հալէպի պետական համալսարանի անգլերէն լեզուի գրականութեան ճիւղը: Անձնական եւ դպրոցական կեանքի կողքին ան սիրած է մարզանքը: Փոքր տարիքէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթի խումբին եւ հասած է մինչեւ աղջկանց առաջին կազմ: Ան ապրած է Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթի լաւագոյն օրերը: Քոյր Շողիկ տասը տարիէ կը պաշտօնավարէ Քառէն Եփփէ Ազգ. Ծեմարանէն ներս, իբրեւ մարզանքի ուսուցչուհի:

Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի երախտաւորները գնահատող իր հարցազրույցներու շարքին, «Մարզիկ» այս թիւով կը գրուցէ քոյր Շողիկ Շառոյեան-Մաթոսեանին հետ, իր ընթերցողներուն ներկայացնելով քոյր յաջողութիւններն ու փորձառութիւնները միութենէն ներս:

**Քոյր Շողիկ, ինչպէս մուտք գործած էք մարզական աշխարհ:**

- Ընտանիքս մեծ դեր ունեցած է, որ ես անդամակցիմ Հ.Մ.Ը.Մ.ին եւ մաս կազմեմ անոր մարզական խումբերուն: Եղբայրներս եւ մեծ քոյրս մարզիկներ էին, եւ մեր ընտանիքին մէջ յատուկ հետաքրքրութիւն եւ քաջալերանք կար մարզանքի նկատմամբ: Չորրորդ դասարանիս քոյր Մարի Մուրատեանը, որ մարզանքի մեր ուսուցչուհին էր, զիս եւ երեք այլ աշակերտներ ընտրեց եւ մեզի յատուկ խնամքով սորվեցուց պասքէթ խաղալ:

Քոյր Մուրատեանի ցուցմունքներով եւ քաջալերանքով, ինչպէս նաեւ քոյր Սօսի Միհրանեանի խնամքով, որ մեզ պահեց մէկ ընտանիքի անդամներու պէս, մենք շարունակեցինք պասքէթը եւ չորսս ալ հասանք աղջկանց առաջին խումբ: Դպրոցի երկրորդական շրջանին, մեր խաղարկութիւնը այնքան լաւ եղաւ, որ մեզ հրաւիրեցին Հալէպի դպրոցներու պասքէթի հաւաքական, եւ մենք մեր մասնակցութիւնը բերինք հաւաքականի մրցաշարքերուն: Օրերը շարունակուելով, մենք մաս կազմեցինք նաեւ Սուրիոյ աղջկանց հաւաքականին: Ես շատ լաւ կը յիշեմ, թէ այդ օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի կազմէն ես, Մարի Մուրատեանը, Սօսի Միհրանեանը, Սոնիկ Տէօքմէքճեանը եւ Սօսի Մակարեանը դարձանք Սուրիոյ հաւաքականի գլխաւոր անդամներ: Այդ շրջանին միշտ նախանձեղի էր մեր մասնակցութիւնը, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին հինգ խաղացողները հաւաքականի անդամներ էին: Կ'ուզեմ յիշել նաեւ մեր կազմի խաղացողներէն Տալիտա Հապէշեանը, Նելլի Տէր Գրիգորեանը, Թալին Խրիկեանը, Սօսի Նահապետեանը, Պէթի Տողրամաճեանը եւ Մարալ Էյլճեանը, որոնք եւս մեր լաւ խաղացողներէն էին: Պասքէթի կողքին ես խաղացած եմ փինկ-փոնկ՝ եղբայրներ Նշան Օղիկեանի եւ Յարութ Խաչատուրեանի մարզիչութեամբ: Եղած եմ նաեւ լուղորդ:

**Ձեր կարծիքով ինչ են յաջող մարզիկ մը ըլլալու պայմանները:**

- Մեր օրերուն այնքան հաճելի էր դաշտը, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր տունը կը գզալինք: Ներկայիս պայմանները այնպէս մըն



տեսնեմ աշակերտ մը, որուն շարժումները ճկուն եւ յաջող մարզիկի արժանիքներ ունին, անպայման զինք կ'ուղղեմ Հ.Մ.Ը.Մ.՝ անդամակցելու համար անոր մարզական խումբերուն: Անշուշտ, դարձեալ կը շեշտեմ, ծնողքի մը քաջալերանքը անհրաժեշտ է:

**Ի՞նչ կը պատմէք ձեր մարզական օրերէն: Յատկանշական ի՞նչ դէպք արձանագրուած է ձեր տպաւորութեան մէջ:**

- Այդ օրերուն մեր խումբը Սուրբիոյ լաւագոյնն էր, բայց կրնամ ըսել նաեւ, որ ամէնէն դժբախտ խումբն էինք: Մեր մրցակիցներն էին Ճալասը, Մահարտէն, Հ.Ե.Ը.Ր, Դամասկոսի Ուահտէն եւ այլ խումբեր, որոնք կը նախանձէին մեր կազմին: Շատ յաճախ հասած ենք աւարտական, բայց իրաւարարներու անարդարութեան պատճառով կորսնցուցած ենք ախոյեանութեան տիտղոսը: Ճալասի դէմ կատարուած մրցումներուն ներկայ կը գտնուէին տասը տարեկանէն մինչեւ վաթսուն տարեկան երէց եղբայրներ: Երբեք չեմ կրնար մոռնալ Սուրբիոյ ախոյեանութեան այն մրցումը, Դամասկոսի մէջ, ուր մենք աւարտական ճակատումը մէկ կէտով պարտեցանք եւ երկրորդ հանդիսացանք: Այդ օր Դամասկոսէն մինչեւ Հալէպ մեր վերադարձը, մեր արցունքները չդադրեցան:

են, որ փոքրիկ մը երբ մարզական խումբի մը անդամակցի, ան ունի իրեն յատուկ ամսական վճարումները, որոնք կը կարծեմ թէ պատճառ կը դառնան մարզիկներու թիւի նուազումին:

Երկրորդ, մարզիկ մը պէտք է ապրի առողջ միջնորդութի մէջ: Այդ օրերուն մենք իբրեւ խաղացողներ բոլորս կ'ապրէինք մէկ ընտանիքի պէս, եւ անհամբեր կը սպասէինք մեր փորձերու ժամերը: Նաեւ, մարզիկ մը պէտք է կարողութիւնը ունենայ իր ժամերը դասաւորելու եւ հոգ տանի իր իր անձնական կեանքին: Այս բոլորին կողքին անհրաժեշտ է նաեւ ծնողքի քաջալերանքը, ինչ որ մեծ դեր ունի մարզիկի մը յաջողութեան մէջ:

**Որո՞նք եղած ձեր մարզիչները եւ ինչո՞վ յատկանշուած է ձեր խաղարկութիւնը:**

- Քոյր Ռոզան եղած է առաջին մարզիչս, որմէ ետք անոր յաջորդած են Ժազ Ըթթէնը, Արամ Աւետիսեանը եւ Լիբանանէն Արմէնը, որ մեր լաւագոյն մարզիչներէն մէկն էր: Մեզի հետ երկար ժամանակ եղաւ նաեւ Բաֆֆի Տէր Յակոբեանը, որուն հետ արձանագրեցինք մեր լաւագոյն արդիւնքները: Ես կը խաղայի պասքէթի թիւ 2 եւ 3 դիրքերու վրայ, եւ նշանակած կէտերուս մեծամասնութիւնը երբեք կէտի հեռաւոր հարուածներ էին: Իմ կատարած փոխանցումներս միշտ յատուկ էին: Մրցումներու ընթացքին երբեք մեզ չէր հետաքրքրէր, թէ ո՞վ կէտ պիտի նշանակէ: Մեզի համար կարեւորը խումբին յաղթանակն էր, որովհետեւ մենք հինգս նոյն մակարդակը ունէինք:

**Ձեր մարզական կեանքը այժմ կը շարունակէք ուսուցչական ասպարէզի մէջ: Ինչո՞ւ հեռու էք մարզական խումբերէ:**

- Բազմաթիւ առիթներով հրաւիրուած եմ Հ.Մ.Ը.Մ., իբրեւ վարչական կամ յանձնախումբի անդամ, բայց դժբախտաբար գործի եւ անձնական պատճառներով չեմ կրցած ընդառաջել այդ առաջարկներուն: Դպրոցի աշխատանքները բոլորովին տարբեր են, որովհետեւ եղածը մարզական դպրոց չէ, այլ՝ մարզանքը կը փոխանցուի դասական եւ ո՛չ մասնագիտական միջոցներով: Մարզական դասերու ժամանակ երբ

**Ի՞նչպէս կ'արժեւորէք Հ.Մ.Ը.Մ.ի պասքէթի ներկայ խումբին արդիւնքները:**

- Վերջին քանի մը տարիներուն խումբը եղած է Սուրբիոյ լաւագոյն դիրքերուն վրայ, բայց կրնայ աւելի լաւ արդիւնքներ արձանագրել: Ես մօտէն ծանօթ չեմ խաղացողներուն, սակայն վստահ եմ որ ներկայ պայմանները առիթը չեն տար որ իրենք իրենց ամբողջ ժամանակը անցրեն պասքէթի դաշտին վրայ, որովհետեւ անոնցմէ իւրաքանչիւրը ունի իր անձնական գործերն ու զբաղումները: Փափաքս է, որ յառաջիկայ օրերուն անոնց արդիւնքները աւելի լաւ ըլլան եւ անոնք նորանոր յաղթանակներ պարգեւեն Հ.Մ.Ը.Մ.ին:

**Ներկայ խաղացողները ինչո՞վ կը տարբերին անցեալի խաղացողներէն:**

- Մենք մէկ խօսքով մարզանքը կը սիրէինք: Նոյնիսկ ձիւն եղած օրերը դաշտ կ'ուղղուէինք եւ մեր ձեռքերով կը մաքրէինք Հ.Մ.Ը.Մ.ի բացօթեայ դաշտը: Ներկայիս ոչ միայն մեր մօտ, այլ՝ բոլոր ակումբներու մէջ նուազած է մարզանքի հանդէպ մարզիկներու սէրը եւ նիւթականը եղած է անոնց հիմնական մտածումը:

**Ի՞նչ կը թելադրէք Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ մարզիկներուն:**

- Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կ'ուզեմ ըսել, թէ սիրեցէ՛ք ձեր միութիւնը եւ խաղացէ՛ք Հ.Մ.Ը.Մ.ի համար եւ ոչ՝ ձեր անձին: Իրարու հետ եղէք աւելի հարազատ եւ մտերմիկ: Արժեւորեցէ՛ք ձեր տարազը եւ անոր կուրծքը գեղեցկացուցած Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը, որ ամէն ինչէ բարձր է:

# ՄԿԱՌԻՏ ԵՂԱՅ

## ՄԿԱՌԻՏԱՊԵՏԻՍ՝ ԿԱՐՕ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ

**Ա**յդ երեկոյ անսովոր ծրարով մը մտայ տուն, գրկած էի առաջին հարստութիւնս, հրճուանքս կ'աւելնար ամէն անգամ, երբ կը դիտէի ծրարս:

Կ'ուզէի խօսիլ մարդոց ու քարերուն, պատմել բոլորին ունեցած հարստութեանս մասին: Մինչեւ տուն՝ ճանապարհին հանդիպած ընկերներուս, ծանօթներուս ու խանութպաններուն կ'ուզէի բանալ ծրարս, ցոյց տալ մէկիկ-մէկիկ ունեցածներս, բացատրել, թէ ինչե՞ր ունէի:

Հագիւ տասներեք տարեկան պատանիներ էինք ու ահա մեր սեփական ինչքերով այս երեկոյ բոլորս ալ ուրախ կը մտնէինք մեր տունները:

Ի՞նչ էին մեր տունները...

Մեզ ապրեցնող, զօրացնող, դաստիարակելով սնուցանող, խանդավառելով սլացնող կայաններ էին մեր տունները: Մեր բոլորին տունները հայոց վանքի խուցերն էին: Ամէն մէկ խուց տրամադրուած էր մէկ գաղթական ընտանիքի: Բազմանդամ թէ սակաւ՝ դատապարտուած էին նոյն պայմաններուն մէջ ամփոփուելու...:

Այդ երեկոյ տուն մտայ, մայրս ու եղբայրս ծրար մը կը տեսնէին ձեռքերուս մէջ, իսկ ես անսահմանօրէն ուրախ կը նայէի իրենց աչքերուն: Արագ կը բանայի ծրարս, ցոյց կու տայի բոլորը, մէկէն կը տարածէի նստարանին վրայ: Գունազեղ գեղեցիկութիւն մը կը պարզուէր մեր տնակին մէջ, ինչպէս փռուած նոր գորգ մը դահլիճի մը մէջ:

Ահա պղնձեայ փայլուն սքանչելի նկար մը, կեդրոնին՝ մեծ ու փոքր Մասիսներ, Արաքսով ու Արեւով: Շրջանակին՝ «Բարձրացիր՝ բարձրացուր» բարձրաքանդակուած մեր նշանաբանը, գլխարկիս ու գօտիիս վրայ: Գլխարկս մոխրագոյն գանգուրներով գառնուկի մորթով: Ձախ կողմին երիզուած՝ Եռագոյն դրօշակ...

- Մամի՛ այս գլխարկս է, այս՝ գօտիս, այս շապիկս է, այս սուլիչս է, այս փողկապս է, կապոյտ եւ նարնջագոյն, «Երուսաղէմի Հայոց Բարեսիրական Միութեան» սկառտներունը կարմիր, կապոյտ, նարնջագոյն է: Անոնց գուլպաններուն վերի մասն ալ Եռագոյն է, շատ գեղեցիկ են անոնց գուլ-



1940. Գ.Մ.Ը.Մ.ի Երուսաղէմի սկաուտներ: Կեդրոնը, գետինը նստած (թիւ 3)՝ Յակոբ Կիլիոյեան: Ա. շարք, կեդրոնը նստած (ակնոցաւոր, թիւ 9)՝ սկաուտապետ Կարօ Մարտիրոսեան:

պաները, անոնք մեզմէ առաջ կազմուած խումբ են, ու այդ գոյները սեփականացուցած:

Այս երիզները կապոյտ եւ նարնջագոյն մեր գուլպաններուն վերի մասին համար են:

- Մամա, նայէ՛, ի՛նչ գեղեցիկ է գլխարկս, այս տարագու երդմանս օրը պիտի հագնիմ: Գիտե՞ս սկաուտին երդումը, մամա՛. ըսեմ, եւ տես, թէ ինչքա՛ն աղուոր բան է սկաուտ ըլլալ: Ու մեր երդումն ու դաւանանքը տող առ տող կը յիշեմ մօրս ու եղբօրս.

«Պատուոյ վրայ կ'երդնում ըլլալ հաւատարիմ Աստուծոյս եւ ծառայել հայրենիքիս: Միշտ օգնել ուրիշին իբր պարտականութեանս զիտակից արի եւ վեհանձն մարդ: Հնազանդիլ հայ սկաուտի դաւանանքին»:

Մեր տնակը կը լուսաւորուէր, լամբարի աղօտ լոյսը զիս չէր տխրեցներ: Մեր տան մէջ մեծ ջահեր կը վառէին, մեր մօտ Աստուած կար ու հայրենիք:

Այդ գիշեր նոր աղուորութեամբ շնչաւորուեցաւ մեր տան մթնոլորտը: Մօրս ու եղբօրս աչքերուն նայելով, հրճուանքս կ'աւելնար: Իրենք եւս կ'ուրախանային: Հանդիսաւորում մը սկսած էր սկաուտական տարագի մոլուքովը, եւ կարծես այ-

լեւս եւ պէտքը չունէի հրապարակային ուրիշ հանդիսաւոր երդման արարողութեան: Արդէն երդումս կատարած էի, այնքան համոզուած գգացումներով եւ գիտակցութեամբ: Այդ օր սկսուող տարագրութեան ունէի շաբաթական երկու դահեկան վճարելու կարողութեամբ:

Սկսուողութեան լոյսով մեր տունը լուսաւորուած էր: Կը թուէի մեր դաւանանքին կէտերը, կը բացատրէի մեր բարեւին նշանակութիւնը, երեք մատները կանգուն, ճկոյթ մատի հնազանդութիւնը իբրեւ կրտսերի, խոնարհած մեծութեան բթամատի պաշտպանութեան: Կը բացատրէի ինչ որ գիտէի: Փողկապս հաւաքող կըր կաշին, որուն վրայ սկսուող խորհրդանշանը ոսկեգոյն տպագրուած թուիչքի գիծերով: Կը բացատրէի իմ բառերով, սկսուող պատրաստակամութեան, գոհաբերութեան, գիտակցութեան, ողջմտութեան, հաւատարմութեան, պարկեշտութեան, պարտաճանաչութեան, ծառայասիրութեան, ընկերասիրութեան ոգին, սէրը, տիեզերքը լեցնող սէրը:

Սկսուող սիրտը բոլոր սիրտերուն զարկերակով շնչաւորող ու շնչաւորող սիրտը:

Սկսուող կեցողութիւնը, եղբայրութիւնը, մարդկայնութիւնը, իր հաւատքէն ստացած պարզութիւնը, որմէ ծնած խաղաղութիւնը, աճումը, նուաճումը, հրճուանքը, կեանքը:

Կը պատմէի այդ բոլորին մասին. բարեգործութեան անսահման սրտի մասին: Սկսուող հայերէնով կը կոչուի Արի: Կը նշանակէ ուժով, բարձր, լեցուն, զօրաւոր, տոկուն, հանդուրժող, համեստ, առաքինի, պարզ, ժուժկալ, խնայող, բազմերանգ գոյներով դիմացող բոլոր տեսակ պայմաններու, զրկուածութեան, ունեւորութեան, կայ, չկայ, ունի, չունի, կուշտ թէ անօթի:

Սկսուող այս բոլորին մէջ ամբողջական ու ամբողջականութեան ձգտում, անսահմանօրէն ծառայ, ունեւոր, ուխտաւոր ու բարի:

Սկսուող պարզ, տեսանելի, խորհուրդ, բարձր ու վեհանձն, գիտակցող ու համբերող:

Սկսուող երդումի ուղեւոր, արթուն պահակ, անգիտակ ու գիտակ, համարձակ ու պարկեշտ:



1955. Բ.Ս.Ը.Ս.ի Երուսաղէմի գայլիկներ հայոց վանքին տանիքը:

Սկսուող խաղաղ ու փոքրիկ սկիզբ ու վախճան, համարձակ ու հաւատարիմ, հաւատացեալ ու պարկեշտ, տարագէն վեր գործիմաստ խորհուրդ:

Սկսուող պատանի, երիտասարդ, հասուն մարդ ու ծերունի. վեր՛ բոլոր երեւոյթներէն, մաքուր ու օրինակելի, այնքան գեղեցիկ ու շնչաւոր ու շնչատու, գուարթ ու առողջ, աչք, միտք ու սիրտ: Հաղորդական ու սիրելի, բարձր, անտեսանելի, համեստ ու տեսանելի, գտանելի, միշտ պատրաստ, մաքուր ու սիրելի:

Սկսուողութեան քաղուածքին դիմաց բոլոր դասակարգներն ու խաւերը՝ հաւասար ուղղամտութեան կշիռքով, բոլոր արարածները արդարօրէն կշռուած: Այդ գեղեցիկութեամբ սնած ազատութիւն, ազատութեամբ զօրացած պարկեշտութիւն, որմէ ամբողջացած խորհուրդ, ներկայութիւն ու կեանք, կեղծիք փճացնող շարժում. շահամոլութիւններ հարթող գլխն, բանտեր դատարկող կենցաղ, խղճամիտ զօրեղ բանակ:

Մամի, շատ գեղեցիկ բան է սկսուողութիւնը: Այսպիսի խորհուրդներու շունչով, պատանի բառերով ու բացատրութիւններով մեր տունը լեցունեցաւ: Մայրս, երջանիկ, զիս կը դիտէր, եղբայրս՝ հիացիկ: Պահ մը լուսութիւն տիրեց, ապա մայրս մեղմ ձայնով մը սկսաւ խօսիլ: Յիշեցուց ինձի, թէ արդէն դպրոց կ'երթամ, ապա գործի, վերջապէս երկու պարտականութիւններ արդէն ունէի, արդարեւ ակումբ ալ կ'երթամ, ինքնին շատ էին այս բոլորը ինձի համար: Ուրիշներուն օգտակար ըլլալը աղուոր բան է, ծառայելը՝ սքանչելի, սակայն ուժ պէտք է ունենալ ծառայելու, տղա՛ս: Հիմա դուն ուժի պէտքը ունիս: Ըսածներդ բոլորը շատ աղուոր բաներ են, շատ սիրեցի: Սակայն դեռ փոքր ես, ու կանուխ է քեզի համար ուրիշներուն մասին մտածել: Աստուած տայ ծառայող ուժ ըլլաս, ուժով մնաս, երբ մեծնաս անկարին հասնիս...

Կը նայէի մօրս աչքերուն, իրաւունք ունէր, դառն իրականութիւնը այդ էր, դառնալով մօրս ըսի.

- Մամի, մի մոռնար ծառք պզտիկուց կը սկսի, արմատներէն սկիզբ կ'առնէ ու ապա կ'աճի, ու իր տեսակով կ'աճի: Ես՝ օր մը որպէսզի կարողանամ մարդոց ծառայել պահանջուած սրտով, այժմէն պէտք է սկսիմ, տեսակը վերջը չի փոխւի, կ'ընայ աճիլ ու զօրանալ, բայց միշտ նոյն տեսակը պահած:

Սկիզբը՝ անհրաժեշտ է, հողը՝ իր ունեցած տեսակի ծառք կ'աճեցնէ, պզտիկուց պէտք է ծառայել գիտնալ, Աստուած ու հայրենիք ճանչնալ, պէտք է այժմէն գիտնամ, պզտիկուց ճշդեմ, տեսակս ճշդուի, վերջը բան չի փոխուի:

Մայրս արցունքոտ աչքերով կը նայէր երկինք, կ'աղօթէր: Տղաս, Աստուած քեզ տուող ձեռք պահէ, հասնող ոտք պահէ, ծառայող սիրտ պահէ, Աստուած ձեռքէդ բռնէ ու ձայնդ լսէ, սիրող սիրտ պահէ...

Ես այդ գիշեր արդէն սկսուող էի Հ.Մ.Ը.Ս.ի:

12.1.1973

# ՔԱՂՅՐ ՅՈՒՇԵՐ...

**Յարուօրին Արկ. Շերնեգեան  
Դպրեվանք, Հայոց Մեծի Տանն  
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան**



**Ա**մէն մարդու համար դարձողական տարիները կը հանդիսանան անմոռանալի ու քաղցր յիշատակներու հանգրուան մը: Սակայն կըրնանք վստահեցնել, թէ Հ.Մ.Ը.Մ.ականին համար այդ բոլորին վրայ կ'աւելնան սկառուտական տարիներու յիշատակները: Սկառուտական հարուստ առօրեան իր իւրաքայտկութիւններով այնպէս մը կը տպաւորէ սկառուտը, որ ան ամբողջ կեանքին ընթացքին չի կրնար բաժնուիլ իր յիշատակներէն:

Բախտաւորութիւն կը նկատենք, որ տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մաս կազմած ենք, ապա պայմաններու բերումով ստիպուած ենք հեռանալ դիմագիծ կերտող ու նկարագիր դարբնող հայկական այդ դարբնոցէն: Սկառուտական կեանքը այնքան լաւ միջավայր ու միջնորդ ստեղծած է, որ գրեթէ բոլոր յիշատակները մինչեւ օրս թարմ կը մնան մեր մտքին մէջ:

Յիշատակներու մեծագոյն մասը կըլու գայ բանակումի օրերէն: Այնքան հաճելի, արկածախնդրական ու երբեմն դժուար թուող եօթնօրեայ կեանքը մեծ փորձառութիւն կարելի է նկատել: Այդ կեանքէն շատ բան կը սորվի մարդ, յուշամատեան մը կը պատրաստէ ան եւ, ի վերջոյ, այդ օրերը վերադառնալու ցանկութիւնը կ'ապրի յաճախ...:

Ահա՛ յուշամատեանէս ծիծաղաշարժ դէպք մը, որ մտապատկերէս չի հեռանար երբեք:

Բանակում է, իսկ բանակումի շրջանին պատիժը տարբեր նշանակութիւն կը ստանայ սկառուտներուն համար (անկախ շատ լաւ յիշատակ մը ըլլայէ): Եւ այդ պատճառով ալ, դեռատի սկառուտներ առանց վախի կը կատարեն չարութիւններ՝ անտեսելով պատիժներու սպառնալիքը:

Բանակումի առաջին օրերուն էր, երբ իբրեւ վարիչ գայլի միացայ արիներուն, որպէսզի գայլիկներուս վրանները կազմեմ: Արիներուն եւ մեր բանակավայրերը սահմանակից էին իրարու: Արիներու սահմանէն կարելի չէր անցնիլ, բայց արգիլուած չէր աչքերու հայեցողութեան թափանցումը: Այդքանն ալ Աստուծոյ շնորհած դիտելու ազատութիւնն էր:

Ամէն առաւօտ, քարի մը վրայ նստած՝ կը դիտէի անցողը-

ները (քանի արգիլուած էր մեզի սահմանէն դուրս գալ): Սահմանակից դրացիներս, իրենց հպարտ կուրծքերը շալկած, տողանցքով կ'երթային ու կու գային:

...Կապոյտ դարձաւ մուկ մանիշակագոյն: Լուսամտիփր դրուեցաւ երկնակամարին վրայ, իսկ սպիտակ մըջիւնները դուրս եկան մուկ երկինքէն: Եւ արիները վերադարձան իրենց բանակավայրը:

Առանձին նստած վրանիս առջեւ, աչքերս ուղղած էի մեր սահմանակից դրացիներուն: Արիներու խմբապետը իր «զինւորները» հաւաքեց վրաններուն առջեւ եւ ծալապատիկ նստեցուց զանոնք, որպէսզի ընթրիք բերէ անոնց: Ի՛նչ հնազանդ ու բարի արիներ ունէր խմբապետը...

Հազիւ սակայն սահմանէն դուրս եկած, արիները կրակ կտրած՝ հնազանդութեան զգեստը հանեցին իրենց վրայէն:

Վստահ եմ, խմբապետը երբ ճաշի մեծ ափսէն ձեռքը կը վերադառնար, հեռուէն կարծեց, որ մուկ երկինքի տակ արիները իրենց հնազանդութեամբ լուսաւորած էին բանակավայրը: Բայց երբ աւելի մօտեցաւ ան, ի՛նչ տեսնէ. արիները ցատկուտելով եւ բացազանչութիւններով իրենց խմբապետին վրանին առջեւ կրակ վառած էին: Սոսճապահար, իրարու անցած՝ ան ձգեց ափսէն հողին վրայ ու փորձեց կրակը մարել: Իսկ արիները կրակը իրենց խմբապետին նուէր ձգելով փախուստ տուին...

Ինչպէ՞ս հասնէր խեղճ խմբապետը արիներուն ետեւէն: Որո՞ւ հասնէր, երբ արիները թիւով աւելի էին եւ իր արագութեան եռապատիկը արագ էին:

Այդպէս չփակուեցաւ պատմութիւնը: Յաջորդ առաւօտ, արտասովոր երեւոյթ մը պարզուեցաւ: Արիները կ'անցնէին դժգոհելով, տրտնջալով եւ «ախ ու վախ»ի ձայներ հանելով, առանց սակայն բարձրէն տեսնուելու... Այն արիները, որոնք ամէն առաւօտ հպարտ կուրծքերով կ'անցնէին մեր բանակավայրին առջեւէն, այս անգամ գլուխները կախ՝ կը սողային...

Ի՞նչ յանցանք ունէին անոնք:

Արդե՞օք անոնք կը կարծէին, թէ իրենք պիտի եփէին իրենց ճաշը...:

# ԻՐԱՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ «ՄԻՓԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆԸ

Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպության և «Նայիրի» Միության ծանօթանալ է տեղ (տեսնել «Մարզիկ»-ի թիւեր 322, 323 և 338), այս թիւով կը ներկայացնենք Իրանի Հայ Մշակութային «Միփան» Միութիւնը, տեղեկութիւնները քաղելով միութեան 40ամեակի յատուկ հրատարակութեան:

## ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

«Ի մի հաւաքելով Սասուն քաղաքամասում բնակուող Հայ երիտասարդութեանը եւ պատանեկութեանը՝ կերտել ու զարգացնել նրանց մէջ կրօնա-բարոյական ըմբռնում եւ ազգային նկարագիր, տալ նրանց Հայեցի դաստիարակութիւն, Ֆիզիքական վարժութիւն՝ վառ պահելով յեղափոխական պայքարի ոգին»:

Այս է եղել «Միփան»-ի հիմնադիրների նշանաբանը եւ նրանց յաջորդող միութենականների կարգախօսը, նոյնն է այսօր՝ մեր օրոք եւ այդ դարձել է միութեան կանոնադրութեան մէկ յօդուածը: «Միփան» միութիւնը հիմնուել է 1963 թուականի Դեկտեմբերին, «Ալիք» հաստատութեան հովանաւորութեամբ եւ մի խումբ ազգայինների եւ մտահոգ երիտասարդների ջանքերի շնորհիւ:

Միութեան հիմնադրութեան մէջ առանցքային դեր է ունեցել Նորայր Էլյայեանը: Միութիւնը իր հիմնադրման օրերին կեդրոնատեղի ունենալով նախ հայոց «Նայիրի», ապա «Թունեան» դպրոցները, կեանքի կոչուած անդամների վարչութիւնը կազմեց միութեան բաժանմունքները, որոնք զբաղւում էին հետեւեալ բնագաւառներով.- թատերախումբ, երգ-չախումբ, գրադարան, հայոց լեզու-գրականութիւն ու նաեւ մշակութային-հանրային ձեռնարկներ: Մարզական բաժանմունքը նախ օժտուում է վոլիպոլի խմբով, ապա պասքեթպոլի եւ վերջում՝ ֆութպոլի: Եւ այսպէս սկսուեց միութեան կեանքը:

## ԿԵՂՈՆԱՏԵՂԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Սեփական կեդրոնատեղի ունենալու կարեւորագոյն նպատակով, միութեան ղեկավարների ջանքերի շնորհիւ յաջողւել է նուիրատուութիւն ապահովել Գուրգէն եւ Վազգէն Սարգսեաններից, «Ալիք» հաստատութիւնից, «Կիւլպէնկեան» հաստատութիւնից ու ժողովրդական նուիրատուութիւններից եւ գնել ներկայ շէնքի հողամասը եւ կառուցել միայակրկ շէնք, 16 Յունիսի 1967 թուականին: Ապա, 1977 թուականի Փետրուարի 25ին, կատարուեց միութեան բակի, գետնափոր սրահի եւ շէնքի հիմնորհնէքը:

1979 թուականի Ապրիլ 22ին սկսուել է կեդրոնատեղիի

երկրորդ եւ երրորդ յարկերի կառուցման աշխատանքը:

1989 թուականին գրնւել է միութեան կից երկյարկանի շէնքը, որի ներքնայարկում ներկայումս գտնուում է «Միփան» գրախանութը:

Միութենականների թիւը բազմապատկուում է՝ յատկապէս կեդրոնատեղի ունենալուց յետոյ: Կազմւում են նաեւ սկսուտական, մի քանի տարի անց նաեւ երէցների եւ նկարչական-արձանագործական բաժանմունքներ եւ կազմակերպւում ինչպէս նաեւ մանկական ամառնային աշխատանքներ:

Մի քանի տարի անց միութեան աշխատանքները աւելի բարգաւաճեցին, ճիւղաւորուեցին եւ թափ ստացաւ բոլոր բաժանմունքների գործունէութիւնը:

## ՆՇՄԱՐՆԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Ինչպէս անցեալում, ներկայումս եւս միութեան յարկի տակ գոյութիւն ունեն մարզաճիւղեր եւ համապատասխան խմբեր, որոնք ներգրաւում են մեծ թիւով երիտասարդ միութենականների: Ներկայումս միութեան մէջ գործող մարզաճիւղերն են.- ճատրակ, պասքեթպոլ, ֆութպոլ ու նաեւ կանանց համար ֆիզիքական պատրաստութեան պարապմունքներ:

## ՆՇՄԱՐՆԵՐ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Սկսուտական բաժանմունքը իր իւրայատուկ աշխատանքներով եւ դրուածքով միութեան կեանքում կարեւոր տեղ է գրաւում եւ աշխատանքի օրերում առանձնայատուկ եռուզեռ եւ աշխուժութիւն է առաջացնում միութեան շրջափակում: Բաժանմունքը բաղկացած է գայլիկ-արծուիկ, արիարենոյլ եւ երէցների հաստատանքներից եւ ծնողական խորհրդից: Վերջինը ղեկավար մարմնի կողքին աշխոյժ մասնակցութիւն ունի յատկապէս բաժանմունքի ձեռնարկներին եւ արչաւ-բանակումներին: Բաժանմունքին անդամակցում են





Թուով 250 սկաուտներ: Հատուածների աշխատանքներն են- սկաուտական գիտելիքներ, Ֆիզիքական, գեղարուեստական, ազգային եւ կրօնական, քոյր միութիւնների հետ միասնական աշխատանքներ, արշաւ եւ բանակում:

Սկաուտական կեանքից կարելի է ակնարկել.-

- 1977ին 11 հոգի երէց սկաուտներ մասնակցել են Հ.Մ.-Ա.Կ.ի նախաձեռնութեամբ Ս. Թաղէի վանքում կազմակերպուած առաջին համասկաուտական բանակումին:

- Կազմակերպել եւ իր մասնակցութիւնն է ունեցել բազմաթիւ համասկաուտական այցելութիւնների եւ արշաւ-բանակումների:

- 1993 թուականի Յուլիսի 20ից, 25 օր տեւողութեամբ այցելութիւն-բանակում Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի նորակազմ սկաուտական աշխատանքներին օգտակար լինելու նպատակով:

- Մասնակցել է Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպէրթ Քոչարեանի Թեհրան այցելութեան հանդիսաւոր ծրագրին «Արարատ» մարզաւանում, Թեհրանի միւս սկաուտական խմբերի հետ:

- 2001 թուականին արի-արեւոյշների գիտելիքների մրցութիւն՝ մասնակցութեամբ Հ.Մ.Ա.Կ.ի, Բարեգործական եւ «Նայիրի» միութիւնների սկաուտների, «Նայիրի»ի սրահում:

- Մասնակցել է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զ. եւ Է. ընդհանուր բանակումներին Հայաստանում- 1998, 2002, թուով 11 եւ 6 սկաուտներով: [Մասնակցած է Գաեւ համա-Յ.Ս.Ը.Մ.ական Ը. եւ Թ. ընդհանուր բանակումներում 2 եւ 7 սկաուտներով - «Մ.»]:

- 2003 թուի Սեպտեմբերի 25ին Իրան-Հայաստան սկաուտական խորհրդաժողով Հ. Մ. «Սիփան» միութիւնում՝ մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի, Հ.Բ.Ը.Մ.ի, Հ.Մ.Ա.Կ.ի , Հ.Մ. «Նայիրի» միութեան, «Բաֆֆի» Մ. Մ. համալրի, Արաքի Մ. Մ. «Արմէն» միութեան, Նոր Զուղայի Հ.Մ. «Արարատ» Մ., «Մարիամ» հաստատութեան եւ Հ.Մ. «Սիփան» միութեան:

**ԳՐԱԿԱՆ ԵՒ «Պ. ՍԵՒԱԿ» ԳՐԱԴԱՐԱՆ**

Գրական բաժանմունքը ունենալով ուսումնասիրական, գրականութեան եւ ասամունքի խմբեր՝ նաեւ վերահասու է «Պարոյր Սեակ» գրադարան-ընթերցարանի աշխատանքներին: Սոյն բաժանմունքը իր կազմաւորման տարիներից մինչ այսօր կազմակերպել է ասամունքի բազմաթիւ մրցոյթներ, դասախօսութիւններ, գրական երեկոներ, հայ գրականութեան դէմքերից Ֆիլմերի ցուցադրում եւ այլն: Նաեւ գրական բաժանմունքը ունեցել է հրատարակչական աշխատանքներ, որոնցից առաջինն է եղել «Ալբուբեն» եռամսեայ պարբերաթերթը, որի առաջին համարը լոյս է տեսել 1981 թուի Ապրիլին: Սոյն թերթը շօշափել է ազգային-հասարակական, մշակութային եւ գրական հարցեր՝ արտացոլելով միութեան նպատակներն ու ուղեգիծը՝ աւելի մատչելի եւ հարազատ ոճով:

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ**

1987 թուականին ելնելով մի շարք միութենականների առաջարկից՝ որոշուեց կեանքի կոչել ուսանողական հատուած, որը վարչականօրէն մաս էր կազմում գրական բաժանմունքի՝ ի մի հաւաքելով քաղաքամասի հայ ուսանողներին եւ մասնագէտ անձանց: Բաժանմունքը իր աշխատանքների շարունակ կազմակերպել է դասախօսութիւնների, մրցութիւնների եւ ցուցահանդէսների կազմակերպում: Հետագայում ունեցել է մասնագիտական, ուսումնասիրական յանձնախումբեր՝ բժշկական, հասարակական եւ գիտական բնագաւառների համար: Ներկայումս ունի շուրջ 40 ուսանողներ, բաժանուած 2 խմբերի՝ աստղագիտական եւ հասարակագիտական, որոնք ձեռնարկում են տարբեր աշխատանքներ:

**ԵՐԷՅՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԷՐ**

Յիշեալ բաժանմունքի ստեղծման որոշումը կայացել է 5 Օգոստոսի 1979ին: Առաջին անգամը լինելով՝ համախմբուել են միութեան երէց անդամները, ունեցել է քարոզչական-ձեռնարկային, շինարարական եւ այլ յանձնախմբեր:

**ՆՇՄԱՐՆԵՐ ՄԻՈՒԹԵԱՆ**

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՑ**

Միութիւնը իր հիմնադրութեան օրուանից անխոնջ կերպով փորձել է իր դերը ունենալ համայնքի մարզա-մշակութային եւ ազգային-հասարակական կեանքում: Ահաւասիկ մշակութային կեանքից ակնարկներ:

- Առաջին շրջանի թատրոններից կարելի է նշել՝

«Նամուսը», «Պէպէքս», «Արշին Մալալան», «Մարուող ճրագներ»՝ շնորհիւ մշակոյթի անխոնջ մշակ Արուսեակ Թաշճեանի եւ «Վասակը բանտում» եւ «Թիւ 5 խելագարը»՝ շնորհիւ Վարդգէս Բաշեանի եւ Նազար Նազարեանի ղեկավարութեան:



- 1974 թվականին վերակազմուել է միու-  
թեան «Միփան» երգչախումբը՝ Հերոս  
Գաբրիելյանի խմբավարութեամբ եւ մի քա-  
նի տարի անց կազմուել է «Կոմիտաս» երգչա-  
խումբը՝ խմբավարութեամբ Տիգրան Սու-  
քիասեանի:

- 1980 թվականից սկսած՝ աշխատանքի  
հրահրուեց Սուրէն Մնացականեանը եւ իր  
ղեկավարութեամբ հիմնուեց «Մկրտիչ  
Թաշճեան» թատերախումբը, 1981 թվակա-  
նի Սեպտեմբերին:

-1982 թ-ին կազմուեց միութեան պատա-  
նեկան երգչախումբը «Գարուն» անունով՝  
ղեկավարութեամբ Տիգրան Սուքիասեա-  
նի, իսկ յետոյ երիտասարդ արուեստագէտ  
Սափօ Ղարիբեանի ղեկավարութեամբ:

- Միութիւնը ունեցել է նաեւ մանկական «Միփանիկ» երգ-  
չախումբը շուրջ 50 անդամներով, որի աշխատանքը տեւել է  
ընդամենը վեց ամիս:

- Մանկական թատերախումբը ղեկավարութեամբ միու-  
թեան Ժանէթ Բաղումեանի, ներկայացրել է «Չարի վեր-  
ջը», «Փիսիկի հիւրը», «Պապն ու շողգամը» եւ այլն:

- Նկարչական եւ արձանագործական դասընթացներ՝  
անուանի նկարիչ, միութեան հիմնադիր կազմի անդամ Լէո-  
նի Թաշճեանի միջոցով, ու նաեւ նկարչական ցուցահանդէսի



կազմակերպում 1990 թվականի Հոկտեմ-  
բերին՝ մէկ շաբաթ տեւողութեամբ:

- 1985 թվականին «Մշակոյթ եւ «մշա-  
կոյթ» թատերգութիւնը՝ բեմադրու-  
թեամբ Վահան Մեհրապեանի:

- 1992ից դաշնամուրի դասարան, մաս-  
նակցութեամբ շուրջ 22 աշակերտների, դա-  
սաւանդութեամբ Միգանոյշ Գալստեանի:

- 1993 թուին, «Կապոյտ լճակներ»՝ բե-  
մադրութեամբ Միշա Հայրապետեանի:

- Պարարուեստի միաւոր՝ կազմուած  
1991ից, երեք դասարաններ՝ տարիքային խմ-  
բերի բաժանումով, պարուսույցներ՝ Կարինէ  
Պետրոսեան՝ «Գարուն» պարախումբ, Սվետ-  
լանա Պատալեան՝ «Կարաւան» եւ Սիլվանա  
Պատալեան՝ «Երազ» պարախումբ:

- 2003 թուի Հոկտեմբեր 20ից երեք օր տեւողութեամբ  
նկարչական ցուցահանդէս նուիրուած «Մշակոյթի Օր» ունան  
եւ միութեան 40ամեակին, դասաւանդութեամբ Նարինէ Այ-  
տինեանի:

- 2003 թուի Օգոստոսի 3ից միութեան 40ամեակի առիթով  
վերակազմուել է «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարու-  
թեամբ տարիների խմբավար Տիգրան Սուքիասեանի:



*Elegance  
Plus*

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**



# «ԵՈՒՐՕ 2012»Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

## Գեորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**2** 012ի ամրան տեղի ունենալիք Եւրոպայի ազգային ֆուտբոլիստների գտումի մրցումները արդէն իսկ որոշ ճամբայ կտրած են: Ցարդ կատարուած մրցումներէն ետք, կարգ մը խմբակներու թեկնածուները սկսած են յստականալ, իսկ այլ խմբակներու մէջ տակաւին անորոշութիւն կը տիրէ:

Կազմակերպիչ երկիրներ՝ Ուքրանիոյ եւ Լեհաստանի կողքին, 51 երկիրներ, բաժնուած ինը խմբակներու, պիտի փորձեն տեղ ապահովել այս մրցաշարքին եւ հետագային պայքարիլ տիրողսին տիրացման համար:

Զտումի մրցումները սկսան 3 Սեպտեմբեր 2010ին եւ պիտի աւարտին 11 Հոկտեմբեր 2011ին:

### Ա. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ Գերմանիոյ գերակայութիւնը շատ պարզ է: Գերմանացիք յաղթանակով աւարտած են իրենց կատարած ցարդ չորս մրցումներն ալ: Անոնց ետին է իրենց դրացի Աւստրիան: Թուրքիոյ կազմը երրորդ դիրքի վրայ գտնուելով պիտի փորձէ առնուազն երկրորդ դիրքը ապահովել, որպէսզի կարենայ անցնիլ փլէյ-օֆի մրցումներուն: Պելճիքացիք հեռու են իրենց փայլուն օրերէն: Ազրպէյճան ըս-

տեղծեց մեծ անակնկալ մը, երբ յաղթեց Թուրքիոյ: Մինչ Ղազախստան ոչինչ կրցած է ընել: Ան իր կատարած չորս մրցումներն ալ աւարտած է պարտութեամբ: Այս խմբակին լաւագոյն կողմըրըն է Միրոսլաւ Բլոզէ՝ վեց կոլով:

### Բ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ պայքարը բուռն է Ռուսիոյ եւ Այլրի միջեւ: Սլովաքները եւս ունէին որոշ «ախորժակ»ներ, սակայն Հայաստանի կազմէն իրենց կրած պարտութենէն ետք՝ անոնց յոյսերը արդէն չբացած են: Հայաստանի կազմը կրնայ անակնկալներ ստեղծել, մանաւանդ որ յաջողական երկու յաղթանակները անոր յոյսերը բարձրացուցած են: Սակայն, հայրենի կազմը իր յաջող երկու մրցումները պիտի կատարէ Ռուսիոյ դէմ, ինչ որ կը նկատուի դժուար առաքելութիւն մը: Մակեդոնիոյ կազմը կրնայ անակնկալներով այս կամ այն կազմէն կէտեր «գողնալ» եւ հաշիւներ խանգարել: Մինչ անտորացիք «ինքնավստահօրէն բազմած են» վերջին դիրքին վրայ: Այս խմբակին կողմըրըն է հայրենի մարզիկ Եուրա Մովսիսեան՝ երեք կոլով:



### Գ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին գլխաւոր թեկնածուն՝ Իտալիան հաստատ քայլերով կ'ուղղուի դէպի «Եուրո 2012»: Երկրորդ դիրքին համար կը պայքարին չորս երկիրներ՝ Հիւսիսային Իրլանտա, Էսթոնիա, Սլովենիա եւ Սերպիա: Ամէնէն յուսալից վիճակը կը պարզէ Սլովենիան, մինչ սերպերը յուսախաբ ըրած են իրենց համակիրները անակնկալ ոչ-համոզիչ արդիւնքներով: Ֆարօ կղզիները ո՛չ մէկ յոյս

ունին, բայց անոնք կարողացան կէտ մը խլել Հիւսիսային Իրլանտայէն: Այս խմբակին լաւագոյն կող-սքորըրն է սերպ Նիքոլա Զիկիչ եւ սլովաք Թիմ Մաթագ՝ երեք կողով:

**Դ. ԽՄԲԱԿ**

Խմբակին պարագլուխի դիրքը գրաւող Ֆրանսա, իր առաջին մրցումին Պիեռուուսիոյ կազմէն անակնկալ պարտութիւն մը կրելով իր դաշտին վրայ, երեք յաջորդական յաղթանակներով գրաւեց առաջին դիրքը եւ դժուար թէ զիջի այլեւս: Սպիտակ ռուսերը կը հետեւին Ֆրանսայի եւ կը գրաւեն երկրորդ դիրքը: Ալպանիա եւ Պոսնիա Հերցեգովինա երրորդ եւ չորրորդ դիրքերու վրայ գտնուելով պիտի փորձեն հասնիլ երկրորդ դիրքին: Ամէնէն ճախող արդիւնքները կ'արձանագրած է Ռումանիա: Ան տակաւին ո'չ մէկ յաղթանակ արձանագրած է: Մինչ վերջին դիրքը գրաւող Լիւքսեմպուրկ յաջողեցաւ կէտ մը խլել Պիեռուուսիայէն: Ֆրանսացիներ Քարիմ Պենզիմա եւ Ետան Կորբուֆ երկու կողով կը գրաւեն լաւագոյն կող-սքորըրներու պարագլուխը:

**Ե. ԽՄԲԱԿ**

Հոլանտացիք հաստատակամ «բազմած են» առաջին դիրքին վրայ: Անոնք դժուար թէ զիջին իրենց դիրքը Շուէտի կամ Հունգարիոյ, որոնք պիտի մրցին երկրորդ դիրքը գրաւելու համար: Ֆինլանտացիք յուսախաբ ըրին իրենց համակիրները եւ գրաւեցին նախավերջին դիրքը: Մոլտաւիա կրնայ խանգարել Հունգարիոյ կամ Շուէտի հաշիւները, կէտեր խլելով անոնցմէ: Սան Մարինո ո'չ միայն որեւէ մրցում չէ յաղթած, այլեւ՝ տակաւին կող չէ նշանակած: Այս խմբակին կող-սքորըրն է հոլանտացի Եան Հիւնթելաար՝ ութը կողով:

**Զ. ԽՄԲԱԿ**

Այս խմբակին մէջ մրցակցութիւնը կը մղուի Խրուակիոյ եւ Յունաստանի միջեւ: Վրաստան եւս «ախորժակներ» ունի, եւ վերոնշեալ երկու կազմերէն մէկուն սխալներէն կրնայ օգտուիլ: Իսրայել եւ Լաթվիա արդէն դուրս մնացած են մրցակցութենէն, սակայն կրնան արգելքներ ստեղծել: Իսկ Մալթա տակաւին դրական ոչ մէկ արդիւնք արձանագրած է: Խմբակին կող-սքորըրն է խրուակի Նիքո Քրանսար՝ չորս կողով:

**Է. ԽՄԲԱԿ**

Մոնթենեկրո անակնկալօրէն կը գրաւէ առաջին դիրքը՝ ի հեճուկա Անգլիոյ, Զուիցերիոյ եւ Պուլկարիոյ: Անգլիացիք մէկ մրցում նուազ կատարած են եւ յաղթանակի պարագային կրնան Ա. դիրքը վերագրաւել: Մինչ Զուիցերիա եւ Պուլկարիա դուրս մնացած են մրցակցութենէն, բայց ի վիճակի են այս կամ այն խումբին ճամբան փակել: Իր կարգին, Կալէս բոլոր մրցումները աւարտած է պարտութեամբ, ինչ որ մրցաշարքի մեծագոյն անակնկալներէն է: Խմբակին կող-սքորըրն է անգլիացի ձէրմըն Տէֆօ՝ երեք կողով:

**Ը. ԽՄԲԱԿ**

Երեք խումբեր կը մրցին առաջին դիրքի համար: Նորվեկ-



իա կը գերազանցէ Փորթուգալն ու Դանիան: Փորթուգալ պարտութիւն մը եւ հաւասարութիւն մը արձանագրելու պատճառով Ա. դիրքը զիջած է Նորվեկիոյ, որ նաեւ մէկ մրցում նուազ կատարած է: Դանիացիք կրնակալի կը հետեւին Փորթուգալի: Կիպրոս եւ մանաւանդ Իսլանտա «հանդիսատես»ի դեր ստանձնած են:

**Թ. ԽՄԲԱԿ**

Սպանացիք ցարդ անսխալական են եւ կը գրաւեն առաջին դիրքը: Զեխիոյ կազմը պիտի փորձէ նուազագոյնը պահել երկրորդ դիրքը, որպէսզի մասնակցի փլէյ-օֆի մրցումներուն: Լիթվանացիք առաջին մրցումին չեխերուն յաղթելէ ետք, «մոռցան» յաղթանակի ճամբան: Սկովտիա, ինչպէս միշտ, պայքարունակ կազմով կը ներկայանայ մրցաշարքերու, սակայն ոչինչ կ'իրագործէ: Լիխթենշթայնի մասնակցութիւնը կը մնայ սոսկական: Սպանացի Ֆեռնանտո Լորենթէ խմբակին լաւագոյն կող-սքորըրն է՝ երեք կողով:

Վերջապէս, ցարդ կատարուած զտումի մրցումներէն ետք, մեծ անակնկալներ չկան: «Մեծերը» հաստատ պիտի ապահովեն իրենց տոմսը, իսկ կարգ մը անծանօթ կազմեր կրնան առաջին անգամ ըլլալով մասնակցիլ այս մեծ մրցաշարքին, ինչ որ ողջունելի է:



# ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ Է

## Կարպիս Գույունձեան ԱԹԵՆՔ

**Մ**օտիկ անցեալին, դպրոցներէն ներս մարմնամարզը երկրորդական դաս մը կը նկատուէր եւ դպրոցականներէն շատեր, իրենց ծնողներուն մեղսակցութեամբ, զանազան պատճառաբանութիւններով մարզանքի դասերուն չէին մասնակցեր:

Վերջերս, սակայն, մարմնամարզի նկատմամբ սփոփելի դարձ մը եղած է: Ծնողներու մեծամասնութիւնը սկսած է համոզուիլ, թէ մարմնամարզը եւ զբօսանքը տղուն միտքը կ'ամփոփեն եւ անոր դասերուն ամրապնդման սատար կ'ըլլան: Տղան ալ նոյնպէս մարմնամարզը երկրորդական դաս մը չեն նկատեր այլեւս եւ հաճոյքով կը մասնակցին դպրոցի մարմնամարզի դասերուն:

Նախնի յոյները, որոնք մարդկութեան մեծ փիլիսոփաներ եւ հեղինակներ տուին, կ'ըսէին, թէ մարմնամարզը հաւասարապէս կը ծառայէ մարմնի եւ մտքի մշակումին, իսկ յոյն փիլիսոփայ Պղատոն կ'ըսէր. «Կատարեալ մարդու մը զարգացումը եւ յառաջխաղացքը կը կայանայ անոր մարմնին եւ

մտքին ու հոգիին մէջ: Մարմինը կը զօրանայ մարզանքով, հոգին՝ նուազով, միտքը՝ գիտութեամբ»:

Ժամանակին, գրեթէ ամէն քաղաք ունէր իր մարզարանը, ուր երիտասարդները մեծամասնութեամբ ըմբշամարտի, վազերու, ոստումի, սկաւառակ ու նետ արձակումի եւ այլ մարզախաղերու կը հետեւէին:

Անցեալին, Քրանսացի Փիէր Տը Քուպերթէն ողիմպիական խաղերու վերակենդանացումը յղանալէ առաջ, ջանաց որ մարմնամարզը երիտասարդութեան դաստիարակութեան եւ տղոց դպրոցական ծրագիրներուն մաս կազմէ: Այսպէսով հասկցնել տալով, թէ մարմնամարզի հետեւողները «անտաշ կոճղեր» չեն ըլլար, ընդհակառակը՝ Փիլիքական դաստիարակութիւնը տղոց հոգեկան եւ մտային աճման կ'ազդէ նպաստաւոր կերպով:

Տղաք դպրոցը առանց զբօսանքի երբ ժամերով նստած կը մնան՝ պիտի յոգնին եւ իրենց ուշադրութիւնը դէպի ուսուցիչը համախմբել պիտի չկարենան, թէեւ այսօր դպրոցներու դասաւանդութեանց պահերէն դուրս զբօսանքի պահեր կան, սակայն անոնք կարճ եւ ժամանակաւոր են եւ տղաքը բաւական չեն սփոփեր եւ կազդուրեր: Տղաք օրական եթէ իրենց աշխուժութեանը չափով չչարժին, չխաղան եւ չարութիւն չընեն, տուն վերադարձին ակելի կը յոգնին ու ջղայնա-

նան, երբ ծնողը իրենցմէ ուզէ որ հանդարտ կենան, որովհետեւ իրենք հանգիստի պէտք ունին:

Մանկավարժական քննարկումները ցոյց կու տան, որ երբ տղաք իրենց աշխուժութեան ներած չափով չեն խաղար եւ չարութիւն չեն ըներ, իրենց հոգեկան վիճակը կը խաթարուի եւ ասիկա արգելք կ'ըլլայ որ անոնք իրենց դասերուն ուշադրութեամբ հետեւին: Հետեւաբար, բնական եւ տրամաբանական է, որ դպրոցներու դասացուցակներուն մէջ շաբաթը գէթ քանի մը ժամ մարզանքի եւ արտադասարանային գործունէութեան պահեր տեղ գտնեն: Սակայն, հարկ է միշտ նկատի ունենալ տղոց մարզական եւ ֆիզիքական համեմատական կացութիւնը: Մանկավարտէզներու մէջ փոքրերը երգերով, պարերով, խաղերով եւ ձեռնային աշխատանքներով իրենց ֆիզիքականը եւ միտքը կը պարզեն: Այսպէսով, կեանքի սկիզբ մը ընելով կը շարունակեն: Ապա, «Մեծ դպրոց»-ի դասացուցակը մարզանքի եւ զբօսանքի պահեր կ'ունենայ, եւ սակայն մարզիչներու եւ մարզական կառույցներու անբաւարարութիւնը տղոց մարմնական եւ ֆիզիքական դաստիարակութեան կիրարկումը կը դժուարացնէ, որովհետեւ մարմնամարզը մեքենայական կերպով «մէկ-երկու» շարժումներու շարք մը չէ միայն: Անոր դերը տղուն մարմնական, ֆիզիքական, մտային եւ հոգեկան յառաջդիմութեան սատարել է:

Մարզանքը տղոց մկանային ամբողջ դրութիւնը ներդաշնակօրէն գործադրութեան մղելով կը պրկէ ու կը բարելաւէ անոնց մարմինը: Կ'ըսեն թէ այն օրէն, երբ ճափոնցիք մարմնամարզը իրենց կեանքէն ներս կ'իրարկել սկսան, իրենց հասակին չափը մինչեւ... տասը սանթիմետր բարձրանալու սկսաւ:

Մարմնամարզը տղոց ուշադրութիւնը իրենց շարժումներուն վրայ կեդրոնացնելով մտքի եւ կարողութեան համադրում մը կ'ունենայ: Ալ աւելին, մարմնամարզի շնորհիւ տղաք



իրենց անձին եւ մարմինն կենսունակութեան ու ֆիզիքական սահմաններուն չափը կը հաստատեն:

Հոգեկանօրէն, մարզանքը տղոց համար համբերութեան եւ համարձակութեան դպրոց մըն է, որովհետեւ մարզանքով տղոց շարժումները ներդաշնակութիւն մը կը ստանան եւ իրենց մտային իւրաքանչիւր անդամը իրեն յատուկ դերը կը խաղայ:

Վերջապէս, մարմնամարզը յարատեւութեան դպրոց մըն է, որովհետեւ տղաք բազմաթիւ ջանքերու դիմելով արդիւնքի մը հասնիլ կը փորձեն:

Մարմնամարզը սակայն բոլոր տղոց համար յանձնարարելի չէ: Երբ տղաք չափազանց գէր են եւ իրենց մարմինը ծանր է, լաւ է որ ծնողքը դիմէ բժիշկի մը խորհուրդներուն: Սխալ է հաւատալ, թէ մարմնամարզով մարմնի յաւելեալ ճարպերէն կ'ընանք ձեռքազատիլ:

Գէր տղաք մարզանքը ուղիղ կերպով չկարենալով կատարել՝ առիթը կու տան իրենց դասընկերներուն, որ ծիծաղին ու խնդան իրենց վրայ: ասիկա հոգեպէս կը նուաստացնէ ու կը վիրաւորէ զանոնք:

Աղջիկներու համար մարմնամարզը, ինչպէս նաեւ պարը, ո'չ միայն իրենց մկանային դրութիւնը կը զօրացնէ, այլեւ՝ իրենց շարժումներուն վստահութիւն եւ ուղղութիւն կու տայ: Նոյնպէս՝ տղոց, որոնք մարզանքով կ'ընան իրենցմէ պակասած վստահութիւնը գտնել:

Յամենայնդէպս, դպրոցին մէջ կեանքը, ինչպէս նաեւ ամէն տեղ, հարկ է որ հաւասարակշռուած ըլլայ:

Մարզանքի եւ ակթիվիզմի յաջողութիւնները տղոց դասերու սերտողութեան եւ ուսման արգելք պէտք չէ ըլլան, այլ՝ հարկ է, որ մտային յաջողութեան լրացուցիչ մէկ մասը դառնան: Բացառաբար, եթէ կան տղաք, որոնք մարմնամարզի արհեստավարժութեամբ կ'ուզեն զբաղիլ, այս պարագային դարձեալ հարկ է որ իրենց զարգացումը երբեք չանտեսեն:





# ԴՐԱՄԸ

## ՀԱՅՐ ԱՆՏՈՆ ԱՂԱՄԵԱՆ ՏԻԹՐՈՅՑ

**Ո**չ ոք կրնայ տարակուսիլ, որ այսօրուան մարդկութեան վրայ իշխող մեծագոյն ուժը դրամն է: Առանց որուն կեանքը կը սառեցի եւ կը կասի: Ամէնէն մատնանշելի եւ ակնառու մարդիկը միլիոնատէրերն են: Հօրատուներն պետութիւնը դրամատէր պետութիւնն է: Որքան դրամ ունենայ, այնքան աւելի կը զօրանայ եւ հսկայական ոստումներով կը յառաջանայ տնտեսութեան մէջ: Մեծղի կարելիութիւններ կ'ունենայ գերարդիական զէնքեր արտադրելու եւ անոնցմով իր գերակայութիւնը պարտադրելու միւս երկիրներուն վրայ, որոնք իրմէ փոքր եւ նուազ դրամատէր են: Իր զինական կարողութեամբ ան կ'ազդէ այդ երկիրներուն վրայ: Կը ցնցէ ու կը սարսափեցնէ զանոնք: Ուզած ժամանակ քաղաքական անկայունութիւն կը ստեղծէ, զանոնք ներքին եւ արտաքին խռովութիւններու եւ ընդհարումներու մղելով: Եւ ինք իբրեւ դէտ, կը զբաղի ու կը զուարճանայ հետեւելով անոնց արիւնալի ցաւալի բախումներուն եւ պայքարներուն: Պատերազմներ կը հրահրէ ու կ'ընդարձակէ՝ աւելի մեծաքանակ զէնք ծախելու եւ նրկական շահեր ապահովելու, ի հաշիւ իր ձեռքը խաղալիք դարձած ժողովուրդներու զոհերու արեան:

Բոլոր ժամանակներու բոլոր պատերազմներուն դրդապատճառը ընչաքաղցութիւնը եղած է: Հող կորզել ուրիշէն: Աւելի՛ ընդարձակուիլ: Մեծնա՛լ, հարստանալ, զօրանալ ու տիրապետել համայն աշխարհի:

Դրամը՝ մոգական այս կուռքը, որուն առջեւ մարդկութիւնը «ահլ եւ դողութեամբ» կը կանգնի՝ ձեռքը սրտին, աչքերը փակ, ճակատը ուղղած դէպի գետին, ու կը խնկարկէ «Ալլէուիաներ» երգելով եւ ծածկաձայն կրկնելով «Քո մեծութեանդ երկիր պագանեմք ով դրամ»: Այդպէս ըրաւ հրեայ ժո-

ղովուրդը, ապերախտ գտնուելով Աստուծոյ հանդէպ, որ ողողած էր զինք իր բարիքներով: Ոսկեճոյլ հորթ մը շինեց եւ տօնական հանդիսութիւններով՝ այր ու կին, մեծ ու պզտիկ երկրպագեցին անոր: Մովսէս մարգարէն ի լուր այս անօրէն արարքին, գայրանալով սաստեց իր մոլորած եւ Աստուածուրաց ժողովուրդին: Եւ Աստուծոյ տեղ պաշտած ոսկեճոյլ հորթը ջարդ ու փշուր ընելով, փոշիի վերածեց, փոշին խառնեց ջուրին ու տուաւ ժողովուրդին որպէսզի խմէ զայն:

Չուր տեղ չէ, որ Քրիստոս զգուշացուց մարդիկը սայթաքելէն, ըսելով անոնց.- «Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ դրամին»:

Յուդան դրամին ծառայելով մատնեց իր Վարդապետը: Դրա՛մն է որ հարազատներ, եղբայրներ, բարեկամներ ու սիրելիներ դատարան կը հասցնէ: Դրամի սիրոյն կը ծախուին հայրենիք, խիղճ ու պատիւ: Դիւային դաւադրութիւններ եւ պետական հարուածներ կը սարքուին: Գողութիւններ, թաւաններ, անգութ առեւանգումներ եւ գազանային ոճիրներ կը կատարուին ու կը գործուին: Դրամով կը կառուցանեն եւ միաժամանակ կը քանդեն աշխարհ:

Արդարեւ, նպատակ դարձաւ այն ինչ որ իբր միջոց հնարուեցաւ, որպէսզի մարդ արժանավայել կերպով ապրի իր կեանքը: Ոչ ոք կը ժխտէ դրամին կարեւորութիւնը եւ արժէքը: Առանց անոր ոչինչ կարող է ընել մարդ: Դրամով է որ ան ինքզինք կը պահէ ու կը յառաջանայ, գիւտեր կը կատարէ ու կը ստեղծագործէ: Կ'ուրախանայ եւ կ'ուրախացնէ իր պարագաները՝ կը զուարճանայ եւ հաճելի ժամանակ կ'անցընէ ճամբորդութիւններով, պտոյտներով եւ խրախճանքներով:

Ընդունելով հանդերձ դրամին անհրաժեշտութիւնը, բացարձակապէս կը մերժենք ու կը դատապարտենք որ ան կեանքի նպատակ դառնայ: Մենք մեզ վիրաւորուած ու խոցւած գգալով, հարց կու տանք «դրամի երկրպագու»ին, թէ ի՞նչպէս իբր ոգեղէն եւ բանաւոր հակ կ'ընդունի ստրկանալ նրկի մը, որ իրմէ անասճամանօրէն... աւելին է:

Եւ եթէ մարդ պիտի երկպագէ մէկու մը, էակի՛ մը կ'երկրր-  
պագէ եւ ո՛չ կորստական ու ժամանակաւոր նիւթին: Երկրր-  
պագութիւնը վայել եւ հարկաւոր է միա՛յն բացարձակին, ան-  
սահմանին եւ յաւիտենականին, որն է Աստուած՝ արարիչը  
ամբողջ տիեզերքի:

Հարկ է որ սթափի եւ արթննայ մարդկութիւնը՝ եղբա-  
բայր զոհը մամոնային (դրամին): Ուղի՛ղ կշռէ, չափէ, դատէ  
եւ արժեւորէ նիւթը: Տա՛յ Աստուծոյ՝ ինչ որ Աստուծո՛յ է, եւ  
նիւթին՝ ինչ որ նիւթին է: Այլապէս, խանգարուած կը մնայ  
ու պիտի մնայ հաւասարակշռութիւնը մարդկային ցեղին: Եւ  
ինչո՞ւ խաւարի ծուղակին մէջ ճանկուած մնայ մարդ: Ինչո՞ւ  
հրաժարի ասպետական հոգիէն, դիրքէն ու մակարդակէն:  
Ինչո՞ւ խաբուի երեւոյթներէն: Արժէք տայ կեղեւին եւ ո՛չ մի-  
ջուկին, էականին:

Ամէնէն ահաւորն ու դատապարտելին ա՛յն է, որ միայն  
հարուստը եւ դրամատէրը տեղ ունին ընկերութեան մէջ:  
Անոնց խօսքը հետաքրքրութեամբ կ'ունկնդրուի, եւ որպէս  
հրամայական կը գործադրուի: Ինչ որ ըսեն՝ իմաստալի կամ  
անիմաստ, կը ծափահարուին: Կ'արժանան տիտղոսներու,  
չքանչաններու, փառքի ու պատիւի: Կը կոչուին «Բարձրա-  
մեծար, վսեմաշուք, մեծայարգ» անարժանաբար: Մինչ աղ-  
քատը որ աւելի ուշիմ, զարգացած եւ արժանաւորապէս  
վկայուած է՝ արհամարհուած եւ անտես կը մնայ: Արդեօք  
տո՞ւրքն է այս աղքատութեան: Մինչեւ ե՞րբ աղքատը տուրք  
պիտի վճարէ:

Սակայն, հպարտանքով պէտք է խոստովանիլ, ի հեճուկս  
մամոնայի արբանեակներուն, որ աշխարհի մեծագոյն հնար-  
ներէն, ստեղծագործող հանճարներէն, ստեղծագործող միտ-  
քերէն եւ պանծալի ղեկավարներէն շատերը համեստ դասա-  
կարգի պատկանած են: Քրիստոս երբ մարդացաւ եւ մանու-  
կի կերպարանքով ծնաւ, աղքատ ընտանիքէ ըլլալով, տեղ  
չգտաւ, ծնաւ թափառական, խեղճ եւ անշուք մսուրի մը մէջ:  
Եւ այս եղաւ պատմական եւ անմոռանալի ամօթի խարան  
մարդկութեան ճակատին:

Արդի հայ գրականութեան տիտաններէն եւ ամէնէն սիրե-  
լի դէմքերէն Յովհաննէս Շիրազ՝ մանկութենէն որբացած,  
կուժը ուսին ջուր կը ծախէր եւ սարին՝ գառնուկներ կ'արա-  
ծէր: Այդպէս հասակ առած մեր անմահանուն բանաստեղծը  
իր աշխատութիւնը յայտարարելով ահագանգ կը հնչեցնէ գո-  
ղերուն, աշխարհի դրամով հարուստներուն, հոգիով աղքատ-  
ներուն.-

«Ա՛խ, ո՞վ գիտէ, թէ սարին դու գառներ ես արածել-  
«Ինքզ սոված մնացել դրախտների մէջ զարնան...»,  
«Բայց վա՛յ ձեզ գողեր, վա՛յ ձեր գիշերին»:

Եթէ իրական գանձ եւ անկորնչելի դրամագրուիս մը կայ  
այս աշխարհին վրայ, ան ալ մարդն է: Գլուխ գործոցը Աստ-  
ւածային ստեղծագործութեան: Եւ եթէ մարդը գոյութիւն  
չունենար, որո՞ւ եւ ինչի՞ պիտի ծառայէր դրամը:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



# ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՁ

Հ.Մ.Ը.Մ. ի Հալեպի Մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդը ՀԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Սուրիոյ Շրջանային վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին ու խմբապետութեան ներկայութեամբ, Կիրակի, 27 Փետրուար 2011ին, աւելի քան երեք հարիւր սկաուտներ եւ արեւոյշներ ներկայ գտնուեցան Հալեպի Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզ եւ մասնակից դարձան սկաուտական կարեւորագոյն արարողութիւններէն՝ վկայականաց բաշխման եւ աստիճանատուչութեան: Արարողութիւնը բացուած յայտարարուեցաւ



«Յառաջ նահատակ» քայլերգով: Նախ տեղի ունեցաւ Նորընծայ եւ Բ. կարգի վկայականներու եւ հաստատագիրներու բաշխում: Այս կարգերուն առաջին հանդիսացող քոյրերն ու եղբայրները ստացան իրենց համապատասխան աստիճանները: Նոյն առիթով, սկաուտական Փոխ Առաջնորդի, Առաջնորդի եւ վարիչ Առաջնորդի աստիճաններով օժտուեցան 54 քոյրեր եւ եղբայրներ:



Ապա, պետական կարմիր մահիկի դասընթացքին յաջողած քոյրերն ու եղբայրները ստացան կարմիր խաչի մասնագիտական իրենց պէճերը: Մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Բաֆֆի Փալանճեան: Եղբայրը շնորհաւորեց վկայական եւ աստիճան ստացող քոյրերն ու եղբայրները, ապա հրաւիրեց մասնաճիւ-

ղի վարչութեան ատենապետ եղբ. Զաւէն Բախտիկեանը՝ յայտարարելու մասնաճիւղին նորակազմ Սկաուտ. Խորհուրդին կազմը:

Սկաուտ. Խորհուրդի կազմը պարզեց հետեւեալ պատկերը.-

- Եղբ. Բաֆֆի Փալանճեան՝ ատենապետ
- Քոյր Դալար Կիրակոսեան՝ ատենադպիր
- Եղբ. Շանթ Մինասեան՝ գանձապահ
- Քոյր Պայծիկ Պազարճեան՝ հաշուապահ

Եղբայրներ Յովիկ Համմայեան, Արամ Յակոբեան, Գէորգ Սարգիսեան եւ քոյր Ծովիկ Կարապետեան-Բէշիշեան

● Եղբ. Բաֆֆի Սիւլահեան՝ մասնաճիւղի խմբապետ

Մասնաճիւղի վարչութեան որոշումով եղբ. Յովիկ Հապէշեան նշանակուեցաւ մասնաճիւղի խմբապետի օգնական:

Վարչութեան ատենապետը շնորհա-



ւորելով նորակազմ Սկաուտ- Խորհուրդը մաղթեց յարատև կորով եւ Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանին ծառայող աշխատանք, արիներուն եւ արենոյշներուն թելադրելով հնազանդիլ միութեան սկաուտական դաւանանքին: Ապա, ան հրաւիրեց Շրջանային խմբապետ եղբ. Աւետիս Տէրվիչեանը՝ փոխանցելու մասնաճիւղի խմբապետին փողկապը: Այնուհետեւ, ընթացաւարտ խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան մասնաճիւղին դրօշակն ու արխիւը փոխանցեց նորանշակ խմբապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեանին:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Սկաուտ- Խորհուրդի խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան:

Շնորհաւորական խօսքերէ ետք, եղբայրը նշեց «Հայ Սկաուտի Օր»-ուան եւ Վարդանանց պատերազմին յիշատակը, որ կը զուգարիպի այս թուականին, շեշտելով որ Հայ սկաուտը, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտը եղած է իր ազգին ծառայող եւ միշտ պատրաստ եղած է իրեն վստահուած որեւէ աշխատանքի:

Արարողութիւնը փակուած յայտարարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



# Հ.Մ.Ը.Մ-Ի ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

## Բաֆֆի Սիւլահեան ՅԱԼԷՊ

**28** Յունուար 2011ին, Հայկի «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն գոյգ վարչութիւններուն անդամական ընդհանուր ժողովը:

Հ.Մ.Ը.Մ-ի Հայկի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Զաւէն Բախտիկեան ժողովը բացուած յայտարարեց «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք ժողովականները ընտրեցին դիւանի կազմը. եղբ. Մանուկ Քէօշկէրեան՝ նախագահ, եղբ. Յովիկ Հապէշեան՝ ատենադպիր: Տեղի ունեցաւ արխիւային, հաշուեքննիչ, քուէախոյզ եւ բանաձեւի յանձնախումբերու կազմութիւն:

Ժողովը իր օրակարգի կէտերը շարունակելով լսեց Հայկի մասնաճիւղի պետական վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, զոր ընթերցեց վարչութեան ատենադպրուհի քոյր Մարիա Քաբուշեան: Ապա, Հայկի մասնաճիւղի վարչութեան անդամ քոյր Սօսի Տէր Արթինեան-Շառոյեան ներկայացուց Հայկի մասնաճիւղի վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, որ վարչութեան աշխատանքներուն կողքին կ'ընդգրկէր ըՄ-կաուտ- Խորհուրդի, շեփորախումբի եւ մարզական խումբերու կատարած գործունէութիւնները, մասնակցութիւնները եւ զանազան տեղեկութիւններ ու աշխատանքներ: Մասնաճիւղին նիւթական տեղեկագիրը ներկայացուց վարչութեան

անդամ եղբ. Կարօ Մահսէրէճեան:

Զոյգ վարչութիւններու տեղեկագիրներու ներկայացումէն ետք տեղի ունեցաւ մասնաճիւղի վարչութեան գործունէութեան քննարկումը: Ժողովականները բարձր գնահատեցին վարչութեան տարած աշխատանքները, որոնք հակառակ իրենց դիմագրաւած բազմապիսի դժուարութիւններուն՝ արձանագրած էին զգալի վերելք: Քննարկումի կողքին, ներկաները նորոշեցին վարչութեան ուղղեցին կարգ մը առաջարկներ: Հ.Մ.Ը.Մ-ի մարզականն ու բանակավայրը դարձան ժողովի քննարկման գլխաւոր կէտերէն:

Ժողովի աւարտին, ներկաները ընտրեցին մասնաճիւղի նոր վարչութիւնը, բաղկացած հետեւեալներէն.- եղբայրներ Զաւէն Բախտիկեան, Վիգէն Սէմէրճեան, Կարօ Մահսէրէճեան, Վիգէն Ետալեան, Տիգրան Պալպանեան, քոյրեր Սօսի Տէր Արթինեան-Շառոյեան եւ Գարօյի Քիւրքլեան:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Յարութ Խաչատուրեան: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ-ը իր 101 մասնաճիւղերով միշտ եղած է այն միութիւնը, որ նորահաս սերունդներուն ջամբած է ուժ, կորով, հայրենասիրութեան եւ զոհողութեան ոգի: Ան փոխանցած է հայեցի դաստիարակութիւն: Այսօր, հաւատարիմ իր նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»-ին, Հ.Մ.Ը.Մ- կու գայ յաջողութիւններով եւ յաղթանակներով լեցուն նոր էջ մը ակեցնելու պատմութեան իր ոսկեմատեանին մէջ:

Եղբայր Խաչատուրեանի շնորհակալական եւ շնորհաւորական խօսքերէն ետք, ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



# ԳԱԹԱՅԻ ԱՒԱՆՂԱԿԱՆ ՀԱՆՂԻՍՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԹԷՆՔԻ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ

## Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ

**Հ**ՄԸՄ-ի Աթէնքի մասնաճիւղի գաթայի աւանդական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 30 Յունուար 2011ին, Ֆիքսի «Արամ Մանուկեան» սկոլմբին մէջ, խոսու բազմութեան մը ներկայութեամբ:

Այս առիթով հրամցուեցաւ ճոխ յայտագիր, որուն բացումը կատարեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Օննիկ Աւագեան: Ան ներկայացուց մասնաճիւղին նախորդ տարուան թուային պատկերը եւ ունեցած գործունէութիւնը:

Յայտագրին սկիզբը, մոկլիներու վոհմակը երգեց երկու երգ: Յաջորդեց գայլիկ-արծուիկական վոհմակի ներկայացումը, որոշ բաժիններով՝ երգով, «Նամակ Կաղանդ Պապային» հատուածի ընթերցանութեամբ եւ զանազան հանելուկներով, որոնց պատասխանները կը տրուէին ժողովուրդէն: Գայլիկ-արծուիկները հանդէս եկան թատերա-



կան պատկերով մը, որ կ'անդրադառնար մարդկային հաւասարութեան սկզբունքին եւ դաստիարակչական իր բնոյթով՝ հարուստի եւ աղքատի հաւասարութեան ազնիւ գաղափարը կը փոխանցէր: Արի-արեւոյշները յաջորդեցին գայլիկներուն: Անոնք շատ ուրախ եւ աշխոյժ գաւեշտ մը ներկայացուցին: Անոնք հանդէս եկան ծպտուած եւ բեմը լեցուցին գունաւոր ու տարբեր տարագ-

ներով:

Գաթայի աւանդական հանդիսութիւնը շարունակուեցաւ տեսերիզի մը ցուցադրութեամբ, որ անդրադարձ մը կը կատարէր մասնաճիւղին անցնող տարեշրջանի գործունէութեան:

Ապա, տեղի ունեցաւ հինգ արի-արեւոյշներու պաշտօնական երգման արարողութիւն: Խմբապետ եղբ. Շղիշ Շահպազեան նոր երգում տուողներու վիզէն անցուց եռագոյն փողկապներ ու փոխանցեց յատուկ պէճեր: Երգում տուին Մաննիկ Մուրատեան, Էլենի Մայտոնի, Երուանդ Մանուկեան, Շանթ Աւագեան եւ Հենրի Մալխասեան:

Այնուհետեւ, հանդէս եկաւ Շրջանային խմբապետուհի քոյր Գոհար Ալիանաքեան, որ կարդաց չորս անդամներու աստիճանի տուչութեան շրջաբերականը: Անկէ ետք, եղբ. Օննիկ Աւագեան կատարեց արարողութիւնը: Եղբ. Արմէն Բախանեան իր երգումը վերանորոգելէ ետք, Վարիչ Առաջնորդի աստիճանէն ստացաւ Փոխ Խմբապետի աստիճան, շարունակելով իր աշխատանքը արի-արեւոյշական խումբին մէջ: Եղբ. Գրիգոր Գէորգեան, քոյր Լոռի Պարագ-





եան եւ եղբ. Եղիշէ Շահպաղեան Փոխ Խմբապետի աստիճան ունենալով, նորոգեցին իրենց երգումը ու ստացան Խմբապետի աստիճան՝ մոկլիներու, գայլիկ-արծուիկներու վոճմակներու եւ արի-արենուչական խումբերու համար:

Հանդիսութեան երկրորդ բաժնին մէջ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկստական Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան: Եղբայրը իր գոհունակութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարժումին ներկայ վիճակին համար: Ան կոչ ուղղեց ծնողներուն իրենց զաւակները վստահելու սկստական շարքերու, ուր կազմա-

կերպուած աշխատանք կը կատարուի խմբապետական ձեռնհաս կազմի մը հսկողութեան տակ:

Եղբ. Մանուկեան յարգանքի խօսք ուղղեց Նէա Զմիռնիի յունական կազմի սկստական խմբապետին, որ ներկայ եղաւ զաթալի հանդիսութեան, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի պատուակալ նախագահ եղբ. Կարպիս Գուլումճեանին եւ վեթերան եղբայր Կարօ Աւագեանին:

Աթէնքի մասնաճիւղի Սկստական Խորհուրդի ատենապետուհի քոյր Դարա Կարապետեան ողջոյնի խօսքով բարեմաղթութիւններ փոխանցեց: Ապա, հրաւիրուեցաւ Աթէնքի հոգեւոր հովիւ

Պարչտ Քհնյ. Խաչերեան օրուան գաթան կտրելու: Այդ առիթով Քահանայ Հայր օրուան պատճառ բարեմաղթութիւններ կատարեց՝ կոչ ուղղելով ծնողներուն իրենց զաւակները վստահելու Հ.Մ.Ը.Մ.ին:

Աւարտին տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն եւ մասնաճիւղի հարիւրի մօտ տարազաւոր քոյր-եղբայրները փակեցին հանդէսը: Հանդիսութենէն վերջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, կազմակերպուած՝ Աթէնքի Սկստական Խորհուրդի օժանդակ քոյրերուն կողմէ:

## ...ՆԱԵՒ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՈՔԻՆԻՈՅ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՋ

### Լոռի Պարագեան ԱԹԵՆՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղին զաթալի աւանդական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 6 Փետրուարին, «Զաւարեան» կեդրոնի «Զաքարեան-Սարաճեան» սրահներէն ներս, ներկայութեամբ Նիքէայի քաղաքապետական խորհուրդի անդամներու, Նիքէայի սկստական խորհուրդի ներկայացուցիչ Ֆիլիփուի եւ Նիքէայի սկստական մասնաճիւղէն երեք երէցներու:

Ներկայ էին նաեւ շրջանի քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր՝ խօսք, երգ,





պար, թատրոն եւ տեսերիզի ցուցադրութիւն: Հանդիսութիւնը վարեցին պարմանուհի քոյրեր Լուսի Եգեկիէյեան եւ Անժէլ Արապեան, հայերէն եւ յունարէն լեզուներով: Միաժամանակ, անոնք ներկայացուցին Գոքինիոյ մասնաճիւղին զանազան մարզերու գործունէութիւնը:

Հանդիսութիւնը սկսաւ ծպտուած գայլիկ-արծուիկներու կողմէ, որոնք ներկայացուցին Կաղանդի նիւթով թատրոն մը: Ապա, երեք գայլիկներ պատմեցին Յիսուսի պատմութիւնը: Պատմութեան ընթացքին, պաստառի մը վրայ ներկայացուեցաւ Յիսուսի կեանքը, շարժուն պատկերներու յաջորդականութեամբ:

Արի-արենյւները տեսերիզի վրայ յունարէնով ներկայացուցին թատրոն մը, որ հիմնուած էր Գուրն Մինասեանի «Հայաստանի պատմուածքներ» գիրքին մէկ պատմուածքին վրայ:

Արի-արենուչական երկսեռ երգչախումբը երգեց Կաղանդի երկու երգ: Երգչախումբին դաշնակով ընկերացաւ արենոյ Մարիլիզ Գնունի, պուզուքիով՝ արի Տիմիթրիս Պօղոսեան:

Մոկլիներու վոհմակի բաժինը ներկայացուց պար (վալս), երգ, մաղթանքներ, բոլորն ալ Կաղանդի թեմայով: Մոկլիները հանդէս եկան ծպտուած կերպով:

Երէց-պարմանուհիներու փաղանգը տեսերիզի ճամբով պատրաստած էր գուարճալի ներկայացում մը:

Յաջորդաբար ցուցադրուեցան երկու տեսերիզներ, հետեւեալ նիւթերով.-

Առաջին՝ մասնաճիւղին նախորդ տարուան գործունէութիւնը, որ կը ներկայացնէր ժողովական կեանքը, արշաւները, ընդհանուր գործունէութիւնը եւ բանակումը:

Երկրորդ՝ Հայաստանի մէջ կազմակերպուած համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի ընդհանուր բանակումին Յունաստանի սկսուածներուն մասնակցութիւնը:

Հանդիսութեան երկրորդ բաժինով խօսքեր արտասանեցին Գոքինիոյ Սկսուածական Խորհուրդին անունով ատենապետուհի քոյր Անահիտ Մանկոյեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ վարչութեան ատենապետուհի քոյր Ռիթա Յակոբեան: Քոյրը նշեց, որ 2011ը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանին հիմնադրութեան 85ամեակը, ինչ որ պիտի տօնակատարուի պատշաճօրէն:

Խօսք առաւ նաեւ Շրջանային Սկսուածական Խորհուրդի ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան: Ան յայտնեց, որ մասնաճիւղի անդամներուն թիւը աճած է 30 առ հարիւր համեմատութեամբ, բնաբան ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Քարճրացի-բարճրացուր»:

Աւարտին հրաւիրուեցաւ Գոքինիոյ Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վարազ Աւագ քնյ. Յովսէփեանը՝ կտրելու օրուան գաթան: Քահանայ Հայրը շնորհակտորելէ վերջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը եւ օրուան յայտագիրը պատրաստողները, ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքային լայն



ծրագիրը, յայտնելով թէ դպրոցին տուածը կ'ամբողջացնէ Հ.Մ.Ը.Մ.ը՝ սէր, յարգանք, բարոյականութիւն եւ չարքաշութիւն փոխանցելով նորահաս սերունդներուն:

Ապա, ան օրհնեց օրուան գաթան: Հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն՝ Գոքինիոյ Սկսուածական Խորհուրդի օժանդակ քոյրերուն կողմէ:

**ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿ ՎՈՀՄԱԿԻՆ ԾԵՐԱՆՈՑ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ գայլիկ-արծուիկական վոհմակը, թիւով 23 հոգի, Շաբաթ, 29 Յունուարին, այցելեց Գոքինիոյ հայկական ծերանոց: Այս առիթով այցելուները ներկայացուցին յայտագիր մը, որ ընդգրկեց Կաղանդի երգեր: Տեղի ունեցաւ գաթայի հատում:

Գայլիկ-արծուիկները ծերանոց առաջնորդեցին իրենց պատասխանատու երէց-պարմանուհիները եւ տեղույն Սկսուածական Խորհուրդի քոյրերը: Ատենապետուհի քոյր Անահիտ Մանկոյեան ծերանոցի պատասպարեալներուն փոխանցեց Նոր Տարուան մաղթանքներ:

Ծերանոց հասնելով, փոքրիկները ընդունուեցան խնամակալ մարմնի ներկայացուցիչին կողմէ: Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Վոհմակը այցելութեան աւարտին նուէր մը փոխանցեց ծերանոցին:

\*\*\*

Կաղանդի առիթով, Գոքինիոյ մասնաճիւղը, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս կատարեց Աւետիսի աւանդական շրջագայութիւնը, Նիքէայի եւ Փիրէայի հայորդիներու տուններն ու խանութները



# Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆՊԷՍՐ

## Մեկան Նազարեան ՓԱՐԻՉ

**Տ**արեկան հանդիպում, ժամադրություն...

Փարիզահայտնությունը անպայմանորեն կը սպասէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչության կազմակերպած տարեկան պարահանդեսը, փաստ՝ խոսուներամ ներկայություն ու մասնակցություն...

Շաբաթ, 8 Յունուար 2011ին, Փարիզի շքեղ պանդոկներէն «Մարիթ»-ի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տարեկան պարահանդեսը:

Աւելի քան 450 հոգի՝ երիտասարդներ ու չափահասներ, ընդառաջելով ու վստահելով Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կազմակերպչական աշխատանքի արդիւնքին, ներկայ էին այդ գիշեր:

Երեկոն, անշուշտ, խանդավառ ու գուարթ էր, զեղարուեստական բաժինը ապահովուած էր «ցիկան» խումբի մը կիսափամեայ ելոյթով, ընթրիքի սեղաններուն շուրջ:

Մինչ պարի հրաւիրող ու հայկական մթնոլորտ ստեղծող բաժինը վստահուած էր Հայկական ժամանած «Կոմիտաս» խումբին, երգիչ Յովսէփի մասնակցութեամբ: Ամբողջ երեկոյի տեւողութեան բեմահարթակը լեցուն էր:

Օրուան բացի գալուստի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Լեւոն Պաղտասարեան, որ հակիրճ տեղեկութիւններ փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի գործունէութեան մասին: Իսկ Կեղրոնական Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեուեան: Ան ծանրացաւ Հ.Մ.Ը.Մ.-ի ազգանքէն գործունէութեան վրայ, հաստատելով, որ Հ.Մ.Ը.Մ.-ը տասնամեակներէ ի վեր անսակարկօրէն կը գործէ ու կը ծառայէ հայ ժողովուրդի շահերուն ու պիտարձիկ, ԻԹ. ՏԱՐԻ, ԹԻԻ 11 (341)



տի շարունակէ ընթանալ այդ ուղղութեամբ՝ նոր սերունդին փոխանցելով հայտնութեամբ ապրելու խայծը:

«Աւանդութեան» վերածուած է արդէն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պարահանդեսի ընթացքին անակնկալ մը մատուցել ներկաներուն: Այս տարուանը՝ ժապաւէն մըն էր, որ կը ներկայացնէր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կեանքին վերաբերող պատկերներ՝ սկստական գործունէութեան համադրում, տարեկան բանակում, համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զրդ բանակում...: Անոր կցուած էր Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքէն, Երուսաղէմի մասնաճիւղէն եղբայր Ռուբէն Նալպանտեանի Արարատի գազաթը բարձրացման ժապաւէնին ցուցադրութիւնը (կրճատումներով):

Ժապաւէնին համադրումը կատարած էին սկստապատասխանատուներ, որուն յաջողած էին գտնել գեղեցիկ եզրի մը օգտագործումը՝ «Փոքր քայլ մը սկստուտի մը համար, մեծ քայլ մը Հ.Մ.Ը.Մ.-ին համար» եզրայանգումը: Իսկապէս, մեծ քայլ մըն էր Հ.Մ.Ը.Մ.-ի պատմութեան մէջ, հայտնութեան խորհրդանիշ

Սուրբ Լերան գազաթին պարզել Հ.Մ.Ը.Մ.-ի դրօշը ու իրմով մարմնաւորելով համասփիւռ Հ.Մ.Ը.Մ.ականները, կըրկին կատարել Հ.Մ.Ը.Մ.-ի երդումը:

Ժապաւէնին ցուցադրութիւնը յուզիչ եւ խրախուսիչ պահ մը ստեղծեց արահէն ներս ու ներկաներու հոգիներուն մէջ:

Երաժշտութիւն, վիճակահանութիւն, նուէրներ, անակնկալներ, նաեւ նուիրատուութիւններ համեմեցին երեկոն:

Պարով ու երգով, նուագով ու գուարճութեամբ այս տարի եւս Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը իր հանրութեան հետ տօնեց հայկական Ծնունդը, Ծնունդ՝ որուն իւրայատկութիւնը արեւմուտքի մէջ կը դառնայ ինքնութեան հետ կապուած կրկնակ ու երկիմաստ դրոյթ, որուն գիտակից է Հ.Մ.Ը.Մ.-ը:



# ԼԵՎԱՄ-Ի 42ՐԴ ՏԱՐԵՇՐԶԱՆԸ

**1** 966ին, Հ.Մ.Ը.Մ-ի Պէջրութի մասնաճիւղի վարչութիւնը կը կազմէր յանձնախումբ մը, որուն պարտականութիւն կու տար զարկ տալ լիբանանահայ վարժարաններու մարզական կեանքին:

Երկու տարի ետք, 1968ին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի 18րդ Պատգամաւորական ժողովին որոշումով, ԼԵՎԱՄ-ի աշխատանքներուն հսկողութիւնը կը յանձնուէր Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան:

ԼԵՎԱՄ-ի նպատակը կը հանդիսանար լիբանանահայ երկրորդական վարժարաններուն մէջ զարկ տալ մարզական շարժումին՝ կազմակերպելով մարզական մրցաշարքեր եւ բարոյապէս օժանդակել վարժարաններուն՝ կատարելագործելու իրենց մարզական դաստիարակութիւնը:

Այնչեալ տարի, ԼԵՎԱՄ-ի մասնակից վարժարաններուն թիւը 17 էր, այս տարի մասնակիցներուն թիւը 22 է:

1. Ազգ. Եղիշէ Մանուկեան Գոլէճ
2. Ազգ. Լ. եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ
3. Ազգ. Յառաջ-«Գ. Կիւլպէնկեան» վարժարան
4. Ազգ. Ս. Խանամիրեան վարժարան
5. Ազգ. Քառասնից Մանկանց վարժարան
6. Ազգ. Աբգարեան վարժարան
7. Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարան
8. Անարատ Յղութեան Հռիփսիմեանց վարժարան
9. Սրբուհի Ագնէս վարժարան
10. Գէորգ Հարպոյեան վարժարան
11. Մխիթարեան վարժարան



12. Հայ Աւետարանական Գոլէճ
13. Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն վարժարան
14. Հայ Աւետարանական Շամլեան-Թաթիկեան վարժարան
15. Հայ Աւետարանական Գոլէճ (Այնճար)
16. Թորոսեան վարժարան
17. Կերթմէնեան վարժարան
18. Դարուհի Յակոբեան վարժարան
19. Ազգ. Նուպարեան-Խրիմեան վարժարան
20. Համազգայինի Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարան

## ՍՏԱՅԱՆՔ

### ԱԼԵՔ ՍԱՆՈՒԿԵԱՆ

Վերատպուած Հ. Հ. Սփիւռքի նախարարութեան կողմէ: Հեղինակ՝ Վարդգէս Համազասպեան, Երեւան, 2010:

\*\*\*

### ՀԱՏՁՆՏԻՐ ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ

Հ. Հ. Սփիւռքի նախարարութեան «Մեր մեծերը» ծրագիր: Ժողովածուն կազմեց եւ յառաջաբանը պատրաստեց Ալեքսանդր Թոփչեան, «Լուսաբաց» հրատարակչատուն, Երեւան, 2010:

\*\*\*

### ՌՈՐԵՐՏ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

Դրանամուրային պիւսնէր  
Հ. Հ. Սփիւռքի նախարարութեան հրատարակութիւն, Ամրոց Գրուպ, Երեւան, 2009

\*\*\*

### ՉԱՅՆ ԲԱԶՄԱՅ...

Գալիֆորնիոյ հայ գրողներու միութեան հրատարակութիւն, «Վան Արեան» հրատարակչատուն, Երեւան, 2008:

\*\*\*

### ARMENIAN PALETTE

Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապի եւ համագործակցութեան հայկական ընկերութեան «Հայկական գունապնակ» մշակութային մատենաշար, թիւ 11, Երեւան, 2010:

\*\*\*

### ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ Գիտահանրամատչելի հանդէս

Հ. Հ. Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի հրատարակութիւն, N° 4, 2008:



- 21. Թէքէեան Վարժարան
- 22. Սահակեան Վարժարան

Աւանդուլթեան վերածուած իր առաքելութեամբ, ԼԵՎԱՄ-ը այսօր կու գայ անգամ մը եւս միանալու հայ դպրոցին՝ իր շուրջ համախմբելով լիբանանահայ գրեթէ բոլոր վարժարաններն ու աշակերտները՝ անոնց մէջ զարգացնելով մրցակցութեան եւ պայքարի ազնիւ ոգին, ազգային եւ եղբայրական մթնոլորտի մէջ պատրաստելով կարգապահ մարզիկներ:

Հարկ է նշել, որ երեք տարիէ ի վեր, ԼԵՎԱՄ-ի հովանաւորութիւնը ստանձնած է Հայկազեան Համալսարանը:

ԼԵՎԱՄ-ը իր 42-րդ տարեշրջանը բոլորելով դադրած է արդէն աշակերտական պարզ մարզախաղեր ըլլալէ եւ դարձած է ազնիւ նկարագիր կերտող ու մանաւանդ հայու ինքնագիտակցութիւնը հայ աշակերտին էութեան մէջ արմատաւորող դարբնոց՝ հայ աշակերտութիւնը համախմբելով մարզական մաքուր մթնոլորտի մէջ:

## ՆՈՐ ՎԱՐՋՈՒԹԻՒՆՆԵՐ ԼՈՆՏՈՆԻ ԵՒ ՎԻԵՆՆԱՅԻ Մէջ

Վերջերս, անդամական իրենց ընդհանուր ժողովները գումարեցին եւ նոր վարչութիւններ ընտրեցին Յ.Ս.Ը.Մ.ի Լոնտոնի եւ Վիեննայի մասնաձիւղերը:

Ստորեւ՝ նորընտիր կազմերը.-

### ●Յ.Ս.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ

Եղբ. Շիրազ Վարդանեան-ատենապետ  
Եղբ. Էտմոնտ Աբրահամեան-ատենադպիր  
Քոյր Ալին Աբրահամեան-հաշուապահ  
Քոյր Մարինա Աւագեան-տնտեսական  
Եղբ. Ալեք Խաչատրեան-խորհրդատու  
Քոյր Ալեմոյշ Արթին-սկաւառակաւ  
Եղբ. Գեորգ Օհանեան-մարզական

### ●Յ.Ս.Ը.Մ. ՎԻԵՆՆԱ

Քոյր Ռիմա Պարոյեան-ատենապետ  
Քոյր Արսինէ Կարապետեան-ատենադպիր  
Եղբ. Սէմ Նահապետեան-գանձապահ եւ  
հաշուապահ

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF  
THE NEW AIRLINE COMPANY

Armavia  
Արմավիա

Photos: © Yann Arhous-Bérendry, Pierre vau du Ciel. Licence 075 960031. Studio K&K 2005-2005

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select  
your Journey
- Guided Tours  
for 8 Days  
or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com

# ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան  
ՊԷՅՐՈՒԹ



**Բ** ոլորս կը սիրենք, որ մեր գիրքերը զարդարւած ըլլան գեղեցիկ նկարներով: Որքան նկարները շատ, գեղեցիկ ու պատկերաւոր ըլլան, այնքան հաճոյքով կը կարդանք մեր ունեցած գիրքերը: Իսկ գիտէ՞ք, որ նախքան տպագրութեան գիւտը, գիրքերը (հնագոյն մատեանները) կը գրուէին եւ կը նկարազարդուէին... ձեռքով:



Գիրքերու նկարազարդման արուեստը կը կոչուի մանրանկարչութիւն: Ժամանակին մանրանկարիչները շատ գեղեցիկ նկարազարդումներ կատարած են գիրքերու մէջ:

Հայկական մանրանկարչութիւնը սկիզբ առած է գիրքերու գիւտի ժամանակ (405 թ.): Ճիշդ է, որ 1512 թուականին տպագրուեցաւ հայերէն առաջին գիրքը, բայց

եւ այնպէս, մարդիկ շարունակեցին գրել մատեաններու վրայ, մինչեւ 19րդ դար: Մեզի հասած ձեռագիր մատեաններէն 11 հազարը կը պահպանուի Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանին մէջ: Յայտնի մանրանկարիչներ են Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, Մոմիկ եւ ուրիշներ:

Ներկայիս, Հայաստանի մէջ շատ մը փոքրիկներ կը հետաքրքրուին մանրանկարչութեամբ եւ անոր գաղտնիքներով: Կը կազմակերպուին յատուկ դասընթացքներ՝ նոր սերունդին մանրանկարչութիւն սորվեցնելու համար:







# ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ

**Ս**արգիս Պիծակ հայ հանճարեղ մանրանկարիչ է: Ան ապրած է 14րդ դարուն, Կիլիկիոյ մէջ: Փոքր տարիքէն ան շուրջինները զարմացուցած է նկարչական իր ձիրքով:

Օր մը, տունը շատ հիւրեր կ'ըլլան: Սարգիս կը նկատէ պատուհանին վրայ հանգչած պիծակ մը (իշամեղու): Ան արագ մը կը նկարէ պիծակը, յետոյ կը ներկայացնէ հիւրերուն: Գինով հիւրերը կը կարծեն, թէ մագաղաթին վրայ պիծակ նստած է եւ կը փորձեն ձեռքով քշել, հեռացնել միջատը: Յետոյ, սթափելով կը հասկնան կատարուածը եւ քահանայ կը ծիծաղին: Այդ օրէն, անոր ծածկանունը կը դառնայ «Պիծակ»:


Ի գուր չէ, որ Սարգիս Պիծակ կը կնքուի այդ անունով: Ան պիծակի պէս կը խայթէր իր ժամանակի աշխարհի գօրեղներն եւ անարդարները: Օր մը, հարուստ իշխան մը կու գայ Սարգիս Պիծակի մօտ ու կ'ըսէ.

- Ես կ'ուզեմ գնել քու բոլոր նկարներդ: Պատրաստ եմ իւրաքանչիւր նկարին փոխարէն ընտիր նժոյգ մը տալ: Իմ նժոյգներէս հօր հեծելախումբ մը կը կազմես: Սարգիս Պիծակ քմծիծաղով մը կը պատասխանէ:

- Կը ցաւիմ, բայց իմ նկարներս նժոյգներով չեմ փոխանակեր:

- Ինչո՞ւ, - կը զարմանայ իշխանը:

- Որովհետեւ քանի մը տասնամեակ ետք քու նժոյգներդ այլեւս չեն խրխնջայ, մինչդեռ իմ նկարներուս գոյները կը թրթռան եւ մարդոց հոգիները կը ջերմացընեն նոյնիսկ հազար տարի ետք:



## ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է: Ասեղներ ունի անհամար, բայց ոչ մէկ հագուստ չէ կարած անոնց համար:


(Պատասխանը՝ յաջորդիւ: Թիւ 338ի հանելուկին պատասխանն էր արջ):



## ԱՆՅԱՒԱՏԱԼԻ ԲԱՅՑ ԻՐԱՒ...

- Աշխարհի մէջ օրական կը մահանայ աւելի քան 6000 հոգի, մեծամասնութեամբ՝ փոքրիկներ, որովհետեւ անոնք ըմպելի մաքուր ջուր չունին:
- Առաջին արարածը, որ դէպի անջրպետ ճամբորդած է, մարդը չէ՝ այլ շեմփանգէ մը, որուն անունը եղած է Համ:
- Աշխարհի ամէնէն փոքր բուն կը կոչուի Էլֆ: Անոր հասակը մօտաւորապէս 12 սմ. է: Ան համպըրկրէ մը թեթեւ կը կշռէ:

## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

9			8			5		
	7	3		1			6	4
5				6		8		
			1		4			6
	1	8				3	4	
4			5		6			
		2			3			8
1	5			7		6	3	
		6		2				7

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիսնոց իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

5	1	7	8	2	6	4	9	3
6	9	3	4	7	1	8	5	2
8	4	2	9	3	5	6	1	7
3	7	9	6	1	4	5	2	8
1	6	5	3	8	2	7	4	9
4	2	8	5	9	7	1	3	6
2	8	6	1	4	9	3	7	5
7	3	4	2	5	8	9	6	1
9	5	1	7	6	3	2	8	4

Պատասխանը՝ յաջորդի

## ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

- Պելճիբացի թենիսավուժըն:
- Մարտունիի գիւղերէն - Թայլանտ՝ նախապէս - Կրկնուած ձայնաւորներ:
- Կոտորել - Վայրի փեղեկ:
- Վերտիօ օփերաներէն - Դատարան:
- Կրկնուած գիրեր - Այլապէս - Ձճմեմ - 470:
- Վրայ - Ծառի կոճղ - Խնդածաղիկ:
- Ափով տրուած հարուած՝ մէկու մը երեսին - Կատաղի:
- Տապալի - Մուկերու ծուղակ:
- Իգական օտար անուն - Գալուստ - Դրկից տառեր:
- Վէզի կոճակ - Պրագիլի ֆուլթպոլի ազգային խումբին նախկին մարզիչը - Կրկնուած բաղաձայններ:
- Թաղանթ - ՏՀաս - Առատ անձրեւ:
- Արաբական երկիր - Կոստանդնուպոլսոյ երբեմնի նշանաւոր տաճարը:
- Օսմանեան ստրուկ - Գիտակցաբար խաբուին - Դրկից գիրեր:
- Ազամանդ - Անձնական դերանուն - Դեհ:
- Ուրց, համեմային բոյս - Անդաստան:
- Տոպրակ - Այբուբենէն - Շարունակ - Իգական օտար անուն:
- Ինչպէս - Տարեգլուխ - Կապոց:
- Ցուցական ածական - Փլիթայ - Շէն - Արական օտար անուն:
- Պատուական - Իգական օտար անուն - Խաղաթուղթի մէկնոց:
- Չգտիլ - Ժամանել - Ճշմ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1											⇒				
2															
3															
4															
5															
6															
7															
8	⇐														
9															
10						⇒									
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

## ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- Սերո Խանգադեանի երկերէն - «Ֆորմիլա 1»-ի ֆինլանտացի մրցավարողը:
- Արու էչ - Սիկարէթի փոքր տուփ - Սեղանաբեկ:
- Պատերազմ - Հացաբոյսերէ ստացուած մածուցիկ նիւթ - Խոնաւ - Իրերայաջորդ տառեր:
- Ափուճ - Քաղցրաձայն թուշուն - Մանր ճնճողուկ:
- Երաժշտական չափ - Վտակ, առու:
- Ասիական մայրաքաղաք - Արցախի լեռներէն:
- Ձայնանիչ - Հատուկտոր - Փորձանք:
- Հեւալ - Ածականակերտ մասնիկ - Քինաթաքոց - Կլայեկ:
- Գաւաթ - Նմանապէս այլ բաներ - Իրերայաջորդ գիրեր - Ձայնանիչ:
- Դէպի հոն - Թոնիրի ալը փակելու խցան - Կասիլ:
- Ողջակէզ - Լերան անարեւ կողմը - Ֆիլմաշխարհի մրցանակ մը - Ածականակերտ մասնիկ:
- Դրախտ - 42.195 մ. երկարութեամբ վազք - Բուխերիկ:
- Անմիջապէս - Ցաւի բացազանչութիւն - Դրոսցի:
- Լիբանանի լեռներէն - Ճղեմ - Կամաց- կամաց:
- Կտակուած ժառանգութիւն - Եզերք - Քերտուանի ծովահայտաց շրջաններէն:

ԹԻԻ 189 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐՈՒՄԸ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1					Շ	Ի	Ք	Ա	Կ	Օ	Պ	Ո	Ի	Լ	Զ
2					Ա	Պ	Բ	Լ	Ք	Է	Ն				
3					Ն	Ա		Լ	Ք	Ե	Լ	Տ	Պ	Ի	Կ
4					Պ	Բ	Օ			Ա	Ս	Ա	Լ		
5		Ա	Ն	ԵՐ	Բ	Ե	Բ			Հ	Ա	Շ	Տ		Խ
6		Բ		Մ	Ա	Լ				Ո	Լ	Ո	Բ	Ե	Լ
7		Ա	Մ	Է	Ն	Ն				Մ	Ա	Հ	Ա	Բ	Ի
8		Մ	Ա	Ն	Ի	Լ	Ա			Ա	Պ	Ա	Մ	Ս	Է
9					Շ	Կ	Ա	Կ	Ա	Ր	Պ	Ա	Ի	Տ	Ք
10					Յ	Ա	Ղ	Ք		Ա	Ր	Ա	Մ	Օ	Մ
11					Ի	Բ	Է	Ք	Ն	Ա	Ե	Բ	Ս		
12					Ա	Ս	Ց	Ո		Ձ	Ա	Ն	Ա	Կ	
13					Ն	Օ	Մ	Ց		Օ	Շ	Ի	Ն	Է	
14					Ա	Մ	Ո	Ն	Ա	Ձ		Ա	Շ	Խ	Է
15					Կ	Տ	Ա	Ի		Պ	Պ		Լ	Ի	Ն
16					Ա	Ց	Բ	Ե	Լ	Լ		Ք	Ի	Ձ	Ա
17					Ս		Ե	Ե		Է	Լ		Ա	Պ	Ա
18					Պ	Ա	Լ	Ա	Տ		Ի	Ր	Մ	Ա	Ո
19					Ա	Ց	Ն	Ի	Ի	Ս		Ա	Ի	Ե	Լ
20					Ս	Պ	Ի	Փ	Ք		Մ	Ղ	Օ	Տ	Ո

ՕՆ ԲԱՆԱԿՈՒՄ  
ԴՈՒ ԵՍ ՄԵՐ ԻՏԷԱԸ

